

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Պաքուն Հիսթորիք Վիճակի Մատնուած

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան վերջերս Հանրային Հեռատեսիլի վրայ իր ունեցած հարցազրոյցի ընթացքին գոհունակութիւն յայտնեց, որ Ֆրանսան եւ Հնդկաստանը դարձած են գինատեսակներու ապահովման գծով Հայաստանի հիմնական գործընկերները, բայց կան նաեւ այլ երկրներ, որոնց անունները չուզեր տալ: Նախարարը նաեւ ըսաւ, որ զենք-զինամթերքի ձեռքբերման աղբիւրներու բազմազանեցումը կ'ընթանայ յաջողութեամբ:

Այս գետնի վրայ Հայաստանի որոշ չափով յառաջխաղացքը սկսած է վրդովմունք յառաջացնել Պաքուի իշխանութիւններուն մօտ: Օր չանցնիր երբ Ատրպէյճանի դեկավարութիւնը չարժարժէ այս նիւթը՝ մեղադրանքներ հնչեցնելով Ֆրանսայի ու Հնդկաստանի հասցէին: «Ֆրանսան, տարածաշրջանին մէջ ապակառուցողական քաղաքականութիւն վարելով, կ'առաջնորդուի «կրակի վրայ պենզին լեցնելու» սկզբունքով», ըսած է Ատրպէյճանի բռնապետ՝ Հայտար Ալիեւ: Իսկ անոր արտաքին գործոց նախարարը՝ Դեյհուլ Պայրամով ըսած է, որ եւրոպական Միութեան կողմէ որեւէ պատրուակով Հայաստանին ռազմական օգնութիւնը կը վնասէ խաղաղութեան:

Վերջին քսան տարիներուն առաջին անգամ ըլլալով Ատրպէյճան կը բողոքէ Հայկական կողմի սպառնազինութիւն ապահովելու գործողութիւններուն դէմ: Անցեալին Հայաստանի քաղաքական շրջանակներն էին, որ դժգոհութիւն կը յայտնէին Ռուսաստանի կողմէ Ատրպէյճանին մատակարարուող զինատեսակներու մասին, իսկ Ռուսական կողմը, առանց նկատի առնելու իր դաշնակից Հայաստանի շահերն ու ապահովութիւնը, կը պատասխանէր թէ, եթէ իրենք չվաճառեն ուրիշներ պիտի վաճառեն:

Սթրաթեգիա Միջազգային Խաղաղութեան Հետազոտութիւններու Հիմնարկը, որ կը զբաղի աշխարհի տարբեր երկիրներու սպառնազինութեան մակարդակի ուսումնասիրութեամբ, վերջերս հրատարակած իր զեկոյցին մէջ կը գրէ, որ թէ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով յայտարարած է, որ իրենք երբեք չեն մատակարարեր սպառնազինութիւն այնպիսի տարա-

## «Ունինք Յառաջընթաց եւ Յաջողութիւններ Զենքի Զեռքբերման Բազմազանեցման Հարցով», Պապիկեան

Հանրային Հեռատեսիլի եթերով իր ունեցած հարցազրոյցի ընթացքին, ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան խօսեցաւ սահմանին տիրող իրավիճակի եւ նոր զինատեսակներու ձեռքբերման մասին:

Սահմանին իրավիճակի կապակցութեամբ նախարարը ըսաւ, որ հոն յարաբերական կայուն է. «Այս պահին կարող ենք գնահատել իբրեւ յարաբերական կայուն: Այս պահին կուտակումներ չկան, եւ վերջին ամիսներին իրավիճակը կարելի է բնորոշել նոյն կերպ, որը կայունութեան եւ հանդարտութեան որոշակի նշաններ է իրենից ներկայացնում», ըսաւ Պապիկեան:

Խօսելով նոր զինատեսակներու մասին Պապիկեան յայտնեց, որ «Ֆրանսան եւ Հնդկաստանը դարձած են Հայաստանի հիմնական գործընկերները, բայց նաեւ կան այլ երկրներ, որոնց չուզեր անդրադառնալ»:

Պապիկեան նշեց, որ երբ 2022-ի սեպտեմբերեան դէպքերէն յետոյ պարզ դարձաւ, որ Հայաստանի համար կը փակուին շուկաներ, խնդիր դրած են ապահովել զէնք-զինամթերքի ձեռքբերման բազմազանեցումը եւ ունին էական յառաջընթաց եւ յաջողութիւններ այս հարցով:



ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան Հանրային Հեռատեսիլի եթերով իր ունեցած հարցազրոյցի ընթացքին,

«Հայաստանի Հանրապետութիւնը որեւէ երկրի նկատմամբ որեւէ նկրտում չունի, որեւէ տարածքային պահանջ չունի, եւ մեր գիտումն ու ժերի նպատակը ՀՀ ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելն է», ընդգծեց նախարարը:

«Ծառայելու պատրաստակամութեան պակաս ունենք, դա ցոյց է տալիս այն հանգամանքը, որ շատերը փորձում են զարտուղի ճանապարհով խուսափել զինծառայու-

թիւնից», անդրադառնալով զօրակոչի խնդիրներուն, ըսաւ Պապիկեան՝ ընդգծելով, որ այդ հարցին անդրադարձած է նաեւ վարչապետը:

«Կան յանձնարարականներ բոլոր պատկան մարմիններին՝ այդ հարցով զբաղուելու համար», աւելցուց նախարար Սուրէն Պապիկեան:

### Հայաստանի Մշտական Բնակչութիւնը 2.990.900 Մարդ

2023 թուականի Յունուար 1-ի դրութեամբ Հայաստանի մշտական բնակչութեան թուաքանակը կազմած է 2.937.500 մարդ, իսկ 2024-ի Յունուար 1-ի դրութեամբ՝ 2.990.900 մարդ: Այս մասին կը յայտնէ Վիճակագրական կոմիտէի հրատարակած տեղեկանքը:

Քաղաքային բնակչութիւնը կը կազմէ 1.915.300 մարդ, գիւղականը՝ 1.075.600 մարդ:

2023 Յունուար-Դեկտեմբերին Հայաստանի մէջ ծնած է 36 հազար 265 երեխայ, մահացած՝ 24 հազար 305 մարդ: Մասնաւորապէս մայրաքաղաք Երեւանի մէջ 2023 Յունուար-Դեկտեմբերին ծնած է 10 հազար 529, մահացած՝ 8 հազար 178 մարդ:

Բնական յաւելածը հաշուետու ժամանակաշրջանին կազմած է 11 հազար 960 մարդ, արձանագրուած է ամուսնութեան 16 հազար 207 դէպք, ամուսնալուծութեան՝ 4 հազար 525 դէպք:

2023-ի Յունուար-Դեկտեմբերին սեռերու յարաբերակցութեան գործակիցը ողջ ծնած նորածիններու շրջանակին մէջ կազմած է 110.7 տղայ՝ 100 աղջկայ դիմաց:

2023 Յունուար-Դեկտեմբերին բնակչութեան կենսունակութեան գործակիցը՝ ծնածներու եւ մահացածներու յարաբերակցութիւնը, կազմած է 149.2%, 2022թ. նոյն ժամանակաշրջանին 136.3%-ի համեմատ:

## Փարիզը կը Նպաստէ Տարածաշրջանին Մէջ Իրավիճակի Սրման. Ալիեւ Մեղադրանքներ Հնչեցուցած է

Ֆրանսան, տարածաշրջանին մէջ ապակառուցողական քաղաքականութիւն վարելով, կ'առաջնորդուի «կրակի վրայ պենզելու» սկզբունքով:

Ինչպէս կը հաղորդեն ատրպէյճանական լրատուամիջոցները, այս մասին ըսած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ Միջխորհրդարանական միութեան գլխաւոր քարտուղար Մարթին Չունկոնկը ընդունելու ժամանակ:

Նշելով, թէ Ֆրանսան կը հանդիսանայ աշխարհաքաղաքական դաւեր նախաձեռնողը, Ալիեւը նաեւ ուշադրութիւն հրաւիրած է, որ պաշտօնական Փարիզը կը նպաստէ տարածաշրջանին մէջ իրավիճակի սրման եւ «հակաատրպէյճանական քաղաքականութիւն» կը վարէ տարբեր միջազգային կազմակերպութիւններ եւ խորհրդարանական մակարդակով:

Ընդգծելով, որ Ֆրանսան կը վարէ Հարաւային Կովկասի տարա-



ծաշրջանին մէջ առաջատար դիրքեր ձեռք բերելու եւ իր ազդեցութիւնը ուժեղացնելու քաղաքականութիւն, Ատրպէյճանի նախագահը նշած է, որ փորձերը այդ ուղղութեամբ ապարդիւն են:

«ԵՄ-ի ու անդամ որոշ երկիրներու կողմէ որեւէ պատրուակով Հայաստանին ռազմական օգնութիւն տրամադրելը կամ հովանաւորութեան ճանապարհով Հայաստանը խաղաղ գործընթացէն դուրս բերելը վնաս պիտի հասցնէ Հարաւային Կովկասի մէջ կայուն խաղաղութեան հաստատման», իր կարգին ըսած է արտաքին գործոց նախարարը՝ ձեջհուն Պայրամով:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Տեղի Ունեցածը Ոչ Սովորական Իշխանափոխութիւն Էր, Ոչ Էլ Պարզունակ Պալատական Յեղաշրջում

Այսօր փետրուարի 3-ն է. 26 տարի առաջ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հրաժարականով վերացաւ ԼՂ հակամարտութեան կարգաւորման ամենապատեհ պահը երբ սեղանին դրուած թերեւս ամենաբախտաւորուած փաստաթղթին, որ ներկայացրել էին միջնորդներն ու համաձայնութիւն տուել Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները: Դէմ դուրս եկան ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարեանը, ՀՀ պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը, ՀՀ Ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի նախարար Սերժ Սարգսեանը, ԼՂ կառավարող էլիտան եւ հայաստանեան ընդդիմութիւնը: Radar Armenia-ն այս կապակցութեամբ ներկայացնում է Նժդէհ Յովսէփեանի՝ «Ստատուս-քոնցլի հայկական ճարտարապետութիւնը» աշխատութիւնից մի հատուած (Երեւան, «Անտարես», 2023):

1998թ. Յունուարի 7-8-ին տեղի ունեցած Հայաստանի Անվտանգութեան խորհրդի ընդլայնուած նիստը հանգրուանային էր ոչ միայն պետական մի շարք այրերի, այլեւ Հայաստանի պետական շինութեան զարգացման ընթացքի համար: Ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանում, քաղաքական տարակարծութիւնները յաճախ են յանգել առանձին պաշտօնեաների հրաժարականներին, ինչն ամենեւին արտառոց երեւոյթ էր: Անգամ ԼՂ հակամարտութեան պէս լրջագոյն եւ պետութեան համար ճակատագրական նշանակութեան խնդրի կապակցութեամբ ծագած տարաձայնութիւնների արդիւնքում տեղի ունեցած փաթեթային պաշտօնաթուղթերը եւ գործընթացի կուլիսային բնոյթը կարող էին տիպաբանուել արեւելեան բնականութեամբ, եթէ իշխանական մի թեւի կողմից ամբողջական իշխանութեան ստանձնումից յետոյ տեղի չունենար վարուող քաղաքականութեան արմատական, ուղենշային եւ թերեւս անշրջելի վերանայում: Ի հեճուկս պաշտօնական հաւաստիացումների, թէ ԼՂ-ի հակամարտութեան կարգաւորման հարցում Հայաստանի քաղաքականութիւնը շարունակուելու է, այն, ըստ էութեան, կրեց մեթոդաբանական խոշոր փոփոխութիւն. ստատուս-քոնցլի պահպանումը ընդունելով որպէս գերնպատակ՝ իշխանութիւնը փոխդիւլումների միջոցով հակամարտութեան կարգաւորման պատրաստակամութիւն էր յայտնում միջազգային ասպարէզում, մինչդեռ ներքին լսարանի առաջ փոխդիւլումը մատուցուել էր իբրեւ «դաւաճանական» ու «պարտուողական»:

Յունուարի 7-8-ի նիստում ոչ միայն բախուեցին ԼՂ հակամարտութեան երկու հակոտնեայ ըմբռնումները, այլեւ Հայաստանի զարգացման 2 մտատիպարները: Այդ բաժանումը ոչ միայն իշխանութեան ներսում գաղափարական մասնատուածութեան, այլեւ քաղաքական եւ հանրային շերտերի տրամադրութիւնների արտայայտութիւնն էր: Առաջին ուղղու-

թեան քաղաքական առաջնորդը նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն էր, որն իր նախագահութեան երկրորդ ժամկետում սկսեց հրապարակային ակտիւ քայլեր ձեռնարկել հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը հասնելու ուղղութեամբ, ինչի առարկայական դրսեւորումը դարձան 1997թ. Սեպտեմբերի 25-ի նրա մամուլի ասուլիսը եւ 1997թ. Նոյեմբերի 1-ին հրապարակած «Պատերա՞զմ, թէ՞ խաղաղութիւն. լրջանալու պահը» յօդուածը:

Ներկայացնելով բանակցութիւնների ընթացիկ դրութիւնը՝ Տէր-Պետրոսեանը պնդում էր, որ սեղանին դրուած փուլային լուծում ենթադրող փաստաթուղթն արտայայտում էր հայկական կողմի ստանալիքի հնարաւոր առաւելագոյնը՝ հաշուի առնելով հարցի երկարաժամկէտ բնոյթը. «Լարաբաղը շահել է ոչ թէ պատերազմը, այլ ճակատամարտը... Փոխդիւլման էութիւնից բացի, կարելու է նաեւ փոխդիւլման պահը: Ակնյայտ է, որ փոխդիւլման դէպքում հասանելի առաւելագոյնը ձեռքբերելու հնարաւորութիւն ունի ուժեղ կողմը: Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են, քան երբեք, բայց հակամարտութեան չկարգաւորման դէպքում մէկ-երկու տարի յետոյ անհամեմատ թուլանալու են»:

ԼՂ հակամարտութիւնը կարգաւորելու Տէր-Պետրոսեանի հակուածութիւնը դժկամութեամբ ընդունուեց ինչպէս ընդդիմադիր քաղաքական ուժերի եւ հասարակա-

կան-մշակութային անհատների, այնպէս էլ իշխանութեան մի թեւի կողմից, ի մասնաւորի՝ ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարեանի, ՀՀ պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանի եւ ՀՀ ներքին գործերի ու ազգային անվտանգութեան նախարար Սերժ Սարգսեանի: Թիմակիցների անհամաձայնութիւնը եւ կամաւոր պաշտոնաթողութիւնից հրաժարուելը ոչ ստանդարտ վիճակ էր՝ նկատի ունենալով առնուազն այդ պաշտօնեաների՝ նախագահի կողմից նշանակուած լինելու, պաշտօնէական ենթարկուածութեան եւ առաջնային մանդատ չունենալու հանգամանքները:

Պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը, որը համարուել էր Տէր-Պետրոսեանի իշխանութեան յենասիւններից մէկը, համոզուած էր, որ հակամարտութեան այդօրինակ կարգաւորումն արժէգրկում էր պատերազմով ձեռքբերուած յաղթանակները. «Այսօր Օմարի զագաթին կանգնած գիւնուորը, այո՛, Երեւանն է պաշտպանում: Ձերբազատուե՞նք պատերազմից, ձերբազատուե՞նք Ղարաբաղից... Ինչպէ՞ս, եթէ դա արդէն մի ամբողջ սերնդի կեանք ու պատմութիւն է՝ պսակուած տասնեակ հազարաւոր զոհերի արեամբ ու յիշողութեամբ, հարիւր հազարաւոր մարդկանց՝ ճակատագիր ու կեանքի նպատակ: Յանուն ինչի՞, եթէ մեր պատմութեան մէջ երբեք

Շար.ը էջ 6

Թուրքիան Սերժեց Երամիութեանը

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Երամիութեան անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան հարցերով յանձնակատար Ժողով Բորելը փետրուարի 3-ին յայտարարել էր Թուրքիայի հետ աւելի սերտ համագործակցութեան ԵՄ մտադրութեան մասին: Բորելը հական վերապահում էր արել՝ խօսելով Կիպրոսի եւ կիպրական կարգաւորման հարցով Թուրքիայի հետ քննարկումների կարեւորութիւնից: Անքարայի պատասխանը երկար սպասեցնել չտուեց: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆիդանը տեղական հեռուստաընկերութիւնից մէկին հարցազրոյցում ասել է, որ իր երկիրը «ժամանակ չունի սպասելու, թէ երբ կ'անդամակցի Եւրամիութեանը»: Նա աւելցրել է, որ Թուրքիան «պէտք է այլընտրանքներ որոնի, պատմական այլ ճանապարհ ընտրի յատկապէս տնտեսական համագործակցութեան ոլորտում»:

Եւրամիութեան անվտանգութեան փոխնախագահ Կորնելի Կորնելը հիմնականում բացել են բանակցութիւնների օրակարգը, որտեղ գլխաւորը տնտեսական եւ էներգետիկ հարցերն են:

Թուրքիայում սղաճը հասել է վաթսուհինգ տոկոսի: Կեղրոնական բանկի նախագահը հրաժարական է տուել, տնտեսութիւնը պարզապէս տենդահար է, Թուրքական լիրայի արժէգրկումը շարունակուել է: Տնտեսական դժուարութիւններ նաեւ Ռուսաստանն ունի: Փութինը եւ էրտողանը կը քննարկեն «գազային հաբի» եւ «Ակիուլու» ԱէԿ-ի կառուցման հետ կապուած հարցեր: Ի՞նչ կը շահեն դրանից կողմերը՝ կարող են դատել տնտեսագէտները, ինչդիրը զուտ մասնագիտական է: Բայց «պատմական նոր ճանապարհ ընտրելու» մասին Թուրքիայի արտգործնախարարի դիտարկումը, կարծես, աշխարհաքաղաքական է, հայէցակարգային:

Անցեալ տարեվերջից Թուրքական մամուլը մի քանի անգամ պարզորոշ գրել է, որ Ռուսաստանը եւ Թուրքիան պէտք է նոր՝ «աշխարհաքաղաքական նշանակութեան պայմանագիր ստորագրեն»: Նման քննարկումներ կողմերի միջեւ սկսուած է՝ ահա թէ որն է հականը: Ռուսաստանը մօտ է իրանի հետ ռազմավարական գործընկերութեան մասին պայմանագրի ստորագրմանը: Յունուարի 24-ին Ան-

քարա է մեկնել իրանի նախագահը: Ենթադրուել է, որ տարուայ ընթացքում Թուրքիայի նախագահը փոխապէ կը կատարի Թեհրան:

Տնտեսական համագործակցութեան այլընտրանք ասելով ի՞նչ նկատի ունի Թուրքիայի արտաքին գործերի նախարարը: Եթէ դա Եւրամիութեանն այլընտրանք է, ապա Թուրքիային սահմամերձ միակ տնտեսական միջավայր է մնում ԵԱՏՄ-ն կամ Եւրասիական ընդհանուր շուկան՝ ինչպէս ռուսաստանցի փորձագէտներն են բնորոշում: Իրանն արդէն ԵԱՏՄ-ի, փաստացի՝ Ռուսաստանի հետ, ստորագրել է ազատ առեւտրի համապարփակ պայմանագիր: Էրտողան-Փութին բանակցութիւնները Թուրքիային կարող են մօտեցնել ԵԱՏՄ-ին: «Մենք Եւրամիութեանն անդամակցելու ցանկութիւն չունենք» - յայտարարել է Իլհամ Ալիեւը:

Թուրքիան եւ Ատրպէյճանը նաեւ տնտեսական սերտ գործընկերներ են: Ատրպէյճանը զարգացնում է Ռուսաստանի հետ տնտեսական, էներգետիկ, կոմունիկացիոն կապերը, որ մի զգալի մասով ուղղուած են Ռուսաստան-իրան հաղորդակցութեան ապահովմանը: Ի՞նչ է նախագծուել կամ ինչի՞ կարող են յանգեցնել դրանք: Որքանով է Թուրքիայի տնտեսութիւնը կախուած Եւրամիութիւնից, հնարաւոր է հասնել հակա-

Շար.ը էջ 12

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոգն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՊԱՆԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Մենք Այսօր Հռչակագրին Հետ Մեր Յարաբերութիւնները պետք է կարգաւորենք



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Հանրային ռատիոյի հետ հարցազրոյցի ընթացքին

Մեր Անկախութեան հռչակագրին մէջ երեք ուղերձ կը նշենք՝ պատմական արդարութիւնը, հայ ժողովուրդին իղձերը եւ ԼՂ Ազգային Խորհուրդի եւ Հայաստանի Գերագոյն Խորհուրդի ԼՂ-ի եւ Հայաստանի վերամիաւորման որոշումը:

Այս մասին Հանրային ռատիոյի «Անվտանգային միջավայր» հաղորդմանը տուած հարցազրոյցին ընթացքին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Նիկոլ Փաշինեան ընդգծեց. «Մենք այսօր Հռչակագրի հետ մեր յարաբերութիւնները իրօք պէտք է կարգաւորենք: Հարց՝ մեր պետական քաղաքականութիւնը արդեօք պէտք է այդ ուղերձով առաջնորդուի, եւ արդեօք մեր պետական քաղաքականութիւնները պէտք է չլուեն ԼՂ Ազգային խորհրդի եւ Հայաստանի Գերագոյն Խորհրդի Ղեկնաչին Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիաւորման որոշման

վրայ: Սա քաղաքական ընտրութեան հարց է, եթէ այո՛ւ՝ նշանակում է, որ մենք խաղաղութիւն երբեք չենք ունենայ: Աւելին, սա նշանակում է, որ մենք հիմա կ'ուսնենք պատերազմ»:


Վարչապետին խօսքով՝ եթէ մենք բանակը կը հզօրացնենք եւ կ'երթանք ու կ'իրագործենք հռչակագրին դրոյթները, այդ կը նշանակէ, որ մեր հարեւանները դաշինք պիտի ձեւաւորեն մեզ ոչնչացնելու համար. «որովհետեւ մենք հռչակած ենք, որ իրենց հետ առնուազն մենք թեմա ունինք»:

«Իմ ասածը, այս խօսույթի զարգացումը Հայաստանն ուժեղացնելու է, թէ՛ թուլացնելու է. միանշանակ ուժեղացնելու է: Եթէ այս խօսույթը ընտրենք որպէս երկարաժամկէտ ռազմավարութիւն, մենք գէնք ձեռք բերելիս էլ խնդիր չենք ունենայ», ընդգծեց վարչապետը:

Փտածութեան Չարաշահումներու Երկու Գործով 7 Անձ Չերբակալուած Է

Քննչական կոմիտէն (ՔԿ) հաղորդեց, որ Տնտեսութեան Նախարարութեան եւ շարք մը անձերու բնակարաններուն մէջ կատարուած խուզարկութիւններու հիման վրայ ձերբակալուած են 7 անձիք, որոնց մէջ փպիսնախարար եւ Ազգային ժողովի նախագահ Ալան Սիմոնեանի եղբոր կինը:

Նախաքննութեամբ պարզուած է, մասնաւորապէս, որ «Տնտեսութեան նախարարութեան պաշտօնատար անձինք «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման» ծառայութեան ձեռքբերման մրցույթի ընթացքում մրցույթի մասնակից N բաժնետիրական ընկերութեան տնօրէնի եւ աշխատակիցների դրոյթմամբ եւ օժանդակութեամբ, մրցույթին այդ ընկերութեան յաղթանակն ապահովելու համար, խախտելով «գնումների մասին» ՀՀ օրէնքի եւ ՀՀ կառավարութեան 2017 թուականի մայիսի 4-ի թիւ N 526-Ն որոշման պահանջները, մրցույթի միւս մասնակից հիմնադրամի համար ստեղծել են մրցույթին վերջինիս մասնակցութիւնն իբր անհնար դարձնող պայմաններ, նրան ապօրինաբար դիտել որպէս մրցույթի պայմաններին չհամապատասխանող ու փաստացի հեռացրել մրցույթից»: «Դրա արդիւնքում մրցույթում յաղթող է ճանաչուել մրցակցից շուրջ երեք անգամ աւել՝ աւելի քան 392 մլն ՀՀ



Տնտեսութեան փոխ նախարար Անի Իսպիրեան

դրամ գնային առաջարկ ներկայացրած ընկերութիւնը», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Իրաւապահներն Տնտեսութեան նախարարութեան իր աշխատասենեակէն տարած են նախօրէին աշխատանքէն ազատուած փոխնախարար Անի Իսպիրեանը: ՔԿ խօսնակը ժամեր անց հաստատեց, որ կան քանի մը ձերբակալուածներ՝ առանց անուններ յստակացնելու:

Աւելի ուշ յայտնի դարձաւ, որ ձերբակալուածներուն մէջ է Ալեն Սիմոնեանի եղբոր կինը՝ Անի Գէորգեանը: րաշահումներու գործով:

Դատարանը Արմէն Չարչեանը Դատապարտեց 3 Տարի 7 Ամիս Պայմանական Բանտարկութեան

Դատարանը «Իգմիրլեան» բժշկական կեդրոնի տնօրէն, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան նախկին պատգամաւոր Արմէն Չարչեանը դատապարտեց 3 տարի 7 ամիս պայմանական բանտարկութեան: Պատիժը պայմանականօրէն չէ կիրառուած, սահմանուած է փորձաշրջան:

Յիշեցնենք, որ Արմէն Չարչեանին մեղադրանք առաջադրուած էր այն բանին համար, որ հանդիսանալով բժշկական կեդրոնի ղեկավար, այդ բժշկական հաստատութեան աշխատակիցներուն՝ իրմէ ծառայողական կախուածութեան մէջ գտնուելու հանգամանքը օգտագործելով անոնց պարտադրած է մասնակցել Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններուն, իր ներկայացուցած դաշինքի օգտին քուէարկել եւ ընտրութիւններուն մասնակցող որոշ կուսակցութեան օգտին չքուէարկելու դէպքի առթիւ:

Թեւեկրամեան ալիքով մը հրատարակուած էր ձայնագրութիւն, համաձայն որուն՝ «Իգմիրլեան» բժշկական կեդրոնի տնօրէն Արմէն Չարչեանը 2021 թուականի խորհրդարանական ընտրութիւններէն առաջ, աշխատակիցներուն հետ հանդիպման ընթացքին յորդորած է, որ վերջիններս պարտադիր կարգով մասնակցին ընտրութիւններուն:

«Ընտրութիւններից յետոյ վերցնելու եմ ցուցակները, ունեմ ձեր բոլորի հասցէները, անուն ազգանունները եւ տեսնելու եմ՝ ով ա գնացել ընտրութեան եւ ով չի գնացել ընտրութեան: Հաւատացէք ով չի գնացել ընտրութեան եւ դիտարկելու եմ իմ խօսքը չկատարող, իմ խնդրանքը, իմ յորդորը, իմ պահանջը չկատարող: Իսկ եթէ ոեւէ մէկը այստեղ նստածներից չի կատարել տնօրէնի խնդրանքը, յորդորը, պահանջը, տնօրէնը եւ տնօրինութիւնը բացարձակ նոյն եւ շատ աւելի կոշտ վերաբերմունք է ունենալու իրենց նկատմամբ: Այդպիսի արտայայտութիւն կայ չէ՞,



«Իգմիրլեան» բժշկական կեդրոնի տնօրէն Արմէն Չարչեան

համարժէք պատասխան: Առաջին պարտադրանքս, յորդորս գնալ ընտրութիւնների, երկրորդը՝ մենք բոլորս աշխատում ենք Մայր Աթոռի պատկան կառույցում, հիւանդանոցը պատկանում է Մայր Աթոռին: Մայր Աթոռի միանշանակ դիրքորոշումը սկսուած Դեկտեմբերից, պատերազմից յետոյ, վեհափառ Հայրապետի առաջին ուղերձից եւ դրանից յետոյ երեք անգամ հաստատուած, եւ վերջինը՝ մի շաբաթ, 10 օր առաջ էր: Մայր Աթոռի դիրքորոշումը հետեւեալն է՝ ներկայ իշխանութիւնները ապաշնորհ են, տապալել են ամէն ինչ եւ նրանք պէտք է հեռանան: Սա եւ ձեզ տեղեկացնում եմ Մայր Աթոռի դիրքորոշումը: Այսինքն՝ ձեր գործատուն ունի էդ դիրքորոշումը: Ես ձեզ չեմ յորդորում գնացէք քուէարկէք սրան նրան: Մայր Աթոռի դիրքորոշումն է, որ ներկայ իշխանութիւններին չպէտք է քուէարկել»:

Ձայնագրութեան հրատարակումէն յետոյ ՀԲԾ-ի մէջ յարուցուած էր քրէական գործ՝ ՀՀ Քրէական Օրէնսգիրքի 154.2-րդ յօդուածի 4-րդ մասի 2-րդ կէտի յատկանիշերով:

Ատրպէյճանի Սահմանադրութեան Մէջ Կան Դրոյթներ, Որոնք Հայելային Պէտք Է Փոփոխուին. Ալէն Սիմոնեան

«Հայաստանի Հանրապետութիւնը հիմնելուց ի վեր իր փաստաթղթերում ունեցել է եւ ունի դրոյթներ, որոնք, իմ կարծիքով, պէտք է վերանայուեն՝ հաշուի առնելով աշխարհաքաղաքական բոլոր փոփոխութիւնները եւ վերջին իրադարձութիւնները», Չեխիոյ Հանրապետութեան Ազգային ժողովի խօսնակ Մարքեթա Փեքարովա Ատամովայի հետ համատեղ ասուլիսին ըսաւ ՀՀ Աժ նախագահ Ալէն Սիմոնեանը՝ պատասխանելով Սահմանադրութեան մէջ կատարելիք փոփոխութիւններուն առնչուող լրագրողի հարցումին:

Ալէն Սիմոնեանի խօսքով՝ պէտք է հասկնալ, թէ Հայաստանը ուր կ'երթայ, ինչ նպատակներ կը հետապնդէ, եւ ինչի համար է Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը. «Արդեօք այդ գոյութիւնը նրա համար է, որ մենք վերականգնենք պատմական Մեծ Հայքը, Փոքր Հայքը, թէ՞ դա Սեպտեմբերի 21-ի մասին է, երբ մենք ստացանք անկախութիւն, թէ՞ ՀՀ քաղաքացու մասին է, որը պէտք է լինի ապահով եւ ունենայ բարե-

կեցիկ կեանք: Ես կարծում եմ, որ այս հարցերի պատասխանները այսօր միանշանակ չեն մեր հանրութեան մէջ եւ դրա հետեւանքով միանշանակ արտայայտուած չեն նաեւ մեր օրէնսդրութեան մէջ: Չի կարող ՀՀ-ն լինել անձեւ բան: Հայկական լեռնաշխարհը, այո, իմ հայրենիքն է, իմ բնօրրանն է, բայց ես ունեմ պետութիւն, որը կոչուում է Հայաստանի Հանրապետութիւն»:

Լրագրողի ակնարկին, թէ արդեօք Սահմանադրութեան փոփոխութիւնը Ատրպէյճանի՞ պահանջն է, Ալէն Սիմոնեան արձագանգեց. «Իմացէք, որ նման հարցեր բարձրացում են նաեւ Հայաստանի կողմից: Ատրպէյճանի Սահմանադրութիւնում, Ատրպէյճանի օրէնսդրական ակտերում նոյնպէս կան դրոյթներ, որոնք հայելային պէտք է փոփոխուեն: Եւ իւրաքանչիւր բանակցութիւն, որը հայկական կողմն իրականացնում է, արւում է հայելային: Եթէ կայ ինչ-որ ակնարկ կամ առաջարկ խաղաղութիւնն աւելի ամուր դարձնելու համար, դա վերաբերելի է թէ՛ Ատրպէյճանին, թէ՛ Հայաստանի Հանրապետութեանը»:

# ԼՈՒՐԵՐ

## Վարչապետն Ու ԱՄՆ Դեսպանը Քննարկած Են ՀՀ-ԱՄՆ Ռազմավարական Երկխոսութեան Հարցեր



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'ընդունի Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Քրիսթինա Քվինը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Քրիսթինա Քվինը, քննարկած են տարբեր ուղղութիւններով երկկողմ համագործակցութեան խորացման, Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսութեան վերաբերող հարցեր:

Փաշինեան ու Քվին միտքեր փոխանակած են Հարաւային Կովկասի մէջ տեղի ունեցող գործընթացներու, տարածաշրջանային ենթակառուցումներու ապաշրջափակման հնարաւորութիւններուն, Հայաստանի կառավարութեան «Խաղաղութեան Խաչմերուկ» նա-

խագիծին շուրջ: Փաշինեան կարեւորած է Հայաստան-ԱՄՆ համագործակցութեան շարունակական զարգացումը եւ ընդգծած է Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներու արդիւնաւէտ իրականացման գործին մէջ ԱՄՆ աջակցութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը բարձր կը գնահատէ ԱՄՆ ջանքերը Հայաստան-Ատրպէյճանի խաղաղութեան գործընթացին մէջ եւ տարածաշրջանին մէջ կայունութեան հաստատման ուղղուած քայլերուն մէջ, եզրափակած է Հայաստանի վարչապետը:

## Իրանը Տարածաշրջանին Մէջ Որեւէ Տարածքներու Փոփոխութիւն Պիտի Չհանդուրժէ. Իրանի Դեսպան



Իրանի դեսպան Մեհտի Սոպիանի

Իրանի դիրքորոշումը յստակ է՝ պիտի չհանդուրժէ աշխարհաքաղաքական որեւէ փոփոխութիւն այս տարածաշրջանին մէջ:

Փորձագէտներու եւ լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին յայտնեց Հայաստանի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպիանին՝ անդրադառնալով Ատրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ յառաջ քաշուող «Չանգեզուրի միջանցքին»:

Աշխարհի մէջ կայ ընդունուած մօտեցում, որուն համաձայն՝ միջանցքը կ'ընկալուի որպէս հարաբերակցութեան կապի հնարաւորութիւն, բայց մեր տարածաշրջանին մէջ այն բոլորովին այլ ընկալում ունի: Ըստ դեսպանին, Իրանը իր քայլերով յստակ ցոյց տուած է,

որ պիտի չհանդուրժէ աշխարհաքաղաքական որեւէ փոփոխութիւն այս տարածաշրջանին մէջ:

«Մենք կ'ողջունենք բոլոր ճանապարհներու եւ հարողակցութիւններու ապաշրջափակումը, եթէ այն տեղի ունենայ երկիրներու շահերու հիման վրայ եւ անոնց ինքնիշխանութեան ներքոյ: Մենք կողմնակից ենք Հայաստանի հզօրացման ու ուժեղացման, խաղաղութեան եւ կայունութեան հաստատման, ուստի այդ ամէնուն մեր տարածաշրջանին մէջ պիտի նպաստէ միայն ուժերու հաւասարակշռութիւնը: Որեւէ օգնութիւն, որ անհրաժեշտ պիտի ըլլայ Հայաստանին հետագայ զարգացման համար, պատրաստ ենք տրամադրելու», շեշտած է Իրանի դեսպանը:

## Ատրպէյճանի Մամուլը Կը Պնդէ, Թէ Երեւանն Ու Փարիզը Սահմանին Տեղային Գործողութիւն Կը Ծրագրեն»

Հայաստանն ու Ֆրանսան յարձակում կը նախապատրաստեն Ատրպէյճանի դէմ. այս պնդումը արդէն երրորդ օրն է, ինչ հետեւողականորէն կը հնչեցուի Պաքուի մէջ գործող պետական եւ պաշտօնական առումով մասնաւոր, բայց իշխանութիւններու ուղղակի վերահսկողութեան տակ գտնուող լրատուամիջոցներուն կողմէ: Այս մասին կը տեղեկացնէ «Ազատութիւնը»:

Մինչ այս պահը, գոնէ, որեւէ փաստական ապացոյցով չհիմնաւորուած այս մեղադրանքներուն պատճառը Ֆրանսայի ազգային ժանտարմերիայի զօրավար Ուիլյամ տէ Մեյերի՝ անցեալ շաբաթավերջին կայացած այցն էր Հայաստան, որուն ընթացքին բարձրաստիճան գինուորականը այցելած էր նաեւ Ատրպէյճանի հետ սահմանի Զերմուկի հատուած:

Ֆրանսացի զօրավարի սահմանային շրջապատը պատկերող լուսանկարները օրերս հրատարակած էր Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութիւնը:

Ուիլյամ տէ Մեյերի սահմանէն այն կողմ այցելութեան առաջիններէն արձագանգեց Ատրպէյճանի պետական հեռուստատեսութիւնը՝ իր ամէնշաբաթյայ կիրակնօրեայ ամփոփիչ ծրագրին ընթացքին:

«Այսօր մենք Ֆրանսայի գործողութիւններուն մասին բաւարար փաստեր ունինք: Սկսիմք անկէ, որ ֆրանսացի զօրավարը Հայաստանի կողմէն կը մօտենայ

Ատրպէյճանի սահմանին եւ հեռադիտակով կ'ուսումնասիրէ զայն: Ո՞րն է անոր այդ քայլին պատճառը: Արդեօք պատերազմի կը նախապատրաստուին: Անոնք կրնան ժխտել այդ, բայց մենք հակառակը կը պնդենք», կը յայտնէր Ատրպէյճանի պետական հեռուստատեսութեան մեկնաբանը՝ շարունակելով, «եթէ նպատակը այլ ըլլար, Ֆրանսան չէր փորձեր աշխուժացնել Հայաստանին սպառազինութեան վաճառքը: Եթէ նպատակը այլ ըլլար, Ֆրանսան Հայաստանի մէջ նոր հետախուզական ծառայութիւն չէր ստեղծեր»:

Ատրպէյճանի պետական հեռուստատեսութիւնը, սակայն, այսքանով չսահմանափակուեցաւ՝ պնդելով, որ Փարիզն ու Երեւանը իբր որոշած են նոյնիսկ ապագայ հիփոթեթիկ յարձակման ուղղութիւնը:

«Ֆրանսան Հայաստանը կը նախապատրաստէ նոր պատերազմի: Մենք գիտենք Մաքրոնի եւ Փաշինեանի ապագայ յարձակման ընդմիջումը ուղղութիւնը: Յարձակումը անակնկալ պիտի ըլլայ եւ պիտի իրականացուի Զերմուկի կողմէ», կը պնդէր Ատրպէյճանի հեռուստատեսութեան լրագրողը՝ չյստակացնելով սակայն, թէ որքանով անակնկալ կրնայ ըլլալ յարձակումը, որուն յստակ ուղղութեան մասին կը պատմեն երկրի պետական հեռուստա-ընկերութեան եթերով:

## Պաքուն Կրկին Դժգոհած Է «Հայկական Կողմի Տեղադրած Ականցներէն»

Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւնը կրկին դժգոհած է «հայկական կողմի տեղադրած ականցներէն»՝ յատարարելով, որ «միջազգային գործընկերներու ձախողումը՝ ստիպել երեւանին վերացնել այդ սպառնալիքը, աւելի շատ զոհերու եւ վիրաւորներու պատճառ կը դառնայ»:

Պաքուի հաղորդմամբ, 2020 թուականի Նոյեմբերէն ականցներու պայթումներէն զոհուած է 343 մարդ: Նախօրէին Ատրպէյճանը յայտնեց, որ Թերթերու շրջանին մէջ

ականցի վրայ քաղաքացի պայթած է, անոր ոտքը անդամահատուած է:

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը Յունուարին տեղեկացուցած էր, որ կը պատրաստուի Ատրպէյճանին յանձնելու ականցապատ դաշտերու քարտէզներու նոր ի յայտ եկած ութ տեղեկամատեաններ:

Ատրպէյճանական կողմը, սակայն, այս յատարարութեան կոշտ արձագանգեց՝ շեշտելով, որ կ'ակնկալէ, որ Հայաստանը ներկայացնէ բոլոր ականցապատ տարածքներու ճշգրիտ քարտէզները:

## ԿԻՄԿ-ն Տեսակցած Է Պաքուի Մէջ Ապօրինի Պահուող Հայերուն

Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի ներկայացուցիչները այս տարուան Յունուարի վերջը եւ Փետրուարի սկիզբը հերթական անգամ տեսակցած են Պաքուի մէջ պահուող հայերուն, որոնց անունները հաստատուած են Ատրպէյճանի կողմէ:

Այս մասին «Արմէնփրես»-ի թղթակիցին հետ զրոյցին տեղեկացուց ԿԻՄԿ հայաստանեան գրասենեակի ներկայացուցիչ Զառայ Ամատունին: «Դրանք պարբերաբար կրկնուող տեսակցութիւններ են, որոնք համաձայնեցում են տուեալ երկրի ղեկավարութեան հետ», նշեց Ամատունին:

Հայաստանի Քննչական Կոմիտէի նախագահ Արգիշտի Քյաւրամեանը աւելի վաղ յայտնած էր, որ Պաքուն կը հաստատէ իր մօտ

23 հայ գերիներու առկայութիւնը՝ չնայած հայկական կողմը փաստական տուեալներ ունի, որ Պաքուն կը պահէ եւս 32 հայ գերի: Պաքուի մէջ ապօրինի պահուող անձերու շարքին են նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահները՝ Արկաղի Ղուկասեանը, Բակո Սահակեանը, Արայիկ Յարութիւնեանը, ինչպէս նաեւ ԼՂ նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեանը, Ազգային Ժողովի նախագահի պաշտօնը զբաղեցուցած Դաւիթ Իշխանեանը, պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականեանը, արտաքին գործերու նախկին նախարար Դաւիթ Բաբայեանը, Պաշտպանութեան բանակի նախարարի նախկին տեղակալ Դաւիթ Մանուկեանը:

### Երեւանի Մէջ Պիտի Ցուցադրուի «Անահիտ Դիցուհիի» Կիսանդրին

Հայաստանի պատմութեան թանգարանին եւ Բրիտանական թանգարանին միջեւ ձեռք բերուած պայմանաւորութեան շնորհիւ 2024 թուականի Սեպտեմբերին առաջին անգամ ըլլալով Երեւանի մէջ պիտի ցուցադրուի Բրիտանական թանգարանին մէջ պահուող «Անահիտ Դիցուհի» կիսանդրին, այս մասին կը տեղեկացնեն ՀՀ Զբօսաշրջութեան կոմիտէին:



ընէն նոյնիսկ Վենետիկին: Թանգարանային նմուշի վերաբերեալ դիտարկումներով 1890 թուականին հանդէս եկած է Վենետիկի Միւթարեան միաբանութեան անդամ Ղեւնոյ Ալիշանը իր «Այրարատ» աշխատութեան մէջ՝ պնդելով, որ պրոնզէ մասունքը կը պատկանի հայոց դիցարանի պտղաբերութեան եւ մայրութեան աստուածուհիին:

Անահիտ աստուածուհիի կիսանդրին հելլենիստական ժամանակաշրջանի արձանային մասունք է, որ յայտնաբերուած է պատմական Փոքր Հայքի տարածքին մէջ՝ Գալլ գետի վերին հոսանքի շրջանին մէջ գտնուող Սատաղ բնակավայրին մէջ: Կը թուագրուի մ.թ.ա. 2-4-րդ դարերուն: 1873 թուականին յայտնաբերուելէ մէկ տարի անց այն ձեռք բերուած է Բրիտանական թանգարանին կողմէ եւ մինչ օրս կը պահուի Միացեալ թագաւորութեան մայրաքաղաքին մէջ:

Բազմաթիւ գիտնականներու համար ընդունելի է այս տեսակէտը՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ գտածոյի յայտնաբերման վայրի մերձակայքին՝ Եկեղեաց գաւառի Երիզա (Երզնկա) բնակավայրին մէջ գտնուած է Անահիտ աստուածուհիին գլխատուր տաճարը:

Այն կը պահուի «Յունական եւ հռոմէական հնութիւններ» վերտառութեամբ ցուցասրահին մէջ որպէս յունական Աֆրոտիթ աստուածուհիի կիսանդրին: Արձանի ծագման շուրջ վէճը մինչ օրս կը շարունակուի, քանի որ որոշ մասնագէտներ կիսանդրին կը վերագ-

### Ձեզի Ըսեր Են՝ Ձեր Դղեակները Սարքեցք, Ձեր Փորերը Մեծցուցք, Իսկ Եթէ Թշնամին Յարձակի, Մեզի Կը Զանգեք՝ Կը Մտածենք Ալէն Սիմոնեան

«Դաշնակցութեան անունը նոյնիսկ չենք էլ ուզում լսել, ոչ թէ ուզում ենք տալ: Վերջին 30 տարուայ ընթացքում առաջին անգամ է Հայաստանի Հանրապետութիւնը պետականութեան հիմքերը դնում: Օրհնելով վերջերս կէտ իտալացի աղջկանից, էս միւսը՝ Սովետական Միութիւնից, սահմանը գծել են հայինչները, ասել են՝ դուք կը նստէք այստեղ, դուք կը գողանաք, բանակից ձեր երեխաներին կ'ազատէք, ձեր զղեակները կը սարքէք, փորներդ կը մեծացնէք, իսկ եթէ թշնամին յարձակուի, մեզ կը զանգէք, կը մտածենք՝ եթէ մեր պետութեանը ձեռք կու տայ, ձեզ կը փրկենք, եթէ ձեռք չի տայ, նորից մանրադրամ կը դառնաք, ինչպէս

100 տարի առաջ դրա օրինակը եղել է», Ազգային ժողովի պատգամաւորներու յայտարարութիւններու ժամին իր ելույթին ընթացքին յայտարարեց Աժ նախագահ Ալէն Սիմոնեանը:

Ան նշեց, որ այդ սխալ ընկալումը իրենց մէջ եւս եղած է, նոյնիսկ 2018 թուականին. «Մենք չենք հասկացել, թէ ինչ է պետականութիւնը»:

Դիմելով ընդդիմութեան՝ Ալէն Սիմոնեան ըսաւ. «Երբ փողոցից եկաք ներս, չասեցիք որն է ձեր օրակարգը, ես անընդհատ սպասում եմ. եկէք խօսենք, յետոյ չգաք չասէք, թէ մենք անմասն ենք մնացել: Դուք ձեր անգործութեամբ հիմա մեղաւոր էք»:

### Անունը Փոխելով Մեր Պատմութեան Բովանդակութիւնը Պիտի Չփոխուի. Ժամանակը Անդրեան

«Հայոց Պատմութիւն»-ը «Հայաստանի Պատմութիւն» կոչելով մեր պատմութեան մաս կազմող բովանդակութիւնը պիտի չփոխուի: Ազգային ժողովի նիստին այս մասին յայտնեց ԿԳՄՄ նախարար Ժաննա Անդրէասեանը՝ պատասխանելով «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Սոնա Ղազարեանի հարցումին:

«Մենք ապրում ենք Հայաստանի Հանրապետութիւնում, եւ ՀՀ դպրոցներում պէտք է անցնեն Հայաստանի պատմութիւնը: Անհեթեթ են այն դիտարկումները, թէ «Հայաստանի Պատմութիւն» կոչելով առարկայից դուրս է մնալու այն բովանդակութիւնը, որը

կազմում է մեր պատմութեան մասը: Սա ամենեւին բովանդակութեան մասին չէ, բովանդակութիւնը նոյնն է՝ անկախ անուանումից: Անուանումը այն մեթոտաբանական դիտանկիւնն է, որով մենք մտնում ենք պատմութեան ուսուցանմանը», նշեց նախարարը:

Ժաննա Անդրէասեանի խօսքով՝ պատմութեան ուսուցանումը ամէն երկրի մէջ այդ պետութեան, երկրի քաղաքացիներու ձեւաւորման գործընթաց է. «Եւ առաջնահերթ է, որ պատմութեան ուսուցանումը կազմակերպուի պետութեան առանցքի շուրջ՝ անկախ նրանից, թէ այդ ժամանակաշրջաններում պետութիւնը եղել է, թէ ոչ»:

### Ապրանքաշրջանառութիւնը ԵԱՏՄ Երկիրներու Յետ Աճած Է 39 Տոկոսով



Փաշինեան Ելոյթ Կ'ունենայ ԵԱՏՄ Միջկառավարական Խորհուրդի Գիստին Ժամանակ

ԵԱՏՄ երկիրներու հետ Հայաստանի Հանրապետութեան ապրանքաշրջանառութիւնը 2023 թուականին նախորդ տարուան համեմատ աճած է 39%-ով եւ կազմած է մօտ 7,8 միլիարդ տոլար: ԵԱՏՄ Միջկառավարական Խորհուրդի նիստին ժամանակ ունեցած Ելոյթին ընթացքին այս մասին ըսած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Արտահանումն աճել է 40,8%-ով, իսկ ներմուծումը՝ 37,5%-ով: Այս փուլում ԵԱՏՄ-ի առաջնահերթ խնդիրների շարքում պէտք է դիտարկել արդիւնաբերական համագործակցութեան ամրապնդումը, նոր առեւտրային կապերի ստեղծումը, թուային ծառայութիւնների անդրսահմանային առեւտրի հաստատումը եւ տուեալների փոխանակումը», յայտնած է Հայաստանի վարչապետը:

Չնայած այն հանգամանքին, որ 2025 թուականին կը նախատեսուի սկսիլ կազի, քարիղի եւ քարիղամթերքներու ընդհանուր շուկաներուն գործունէութիւնը, այսօր ակնյայտ է, որ չկայ անգամ երկիրներու յստակ միասնական մօտեցում՝ ուժանիւթի միջոցներով:

րու ընդհանուր շուկայի կառուցման եւ զարգացման հեռանկարներու տեսանկիւնէն:

ԵԱՏՄ Միջկառավարական Խորհուրդի նիստին այս մասին ըսած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Վստահ եմ, որ առանց բացառութեան ԵԱՏՄ անգամ բոլոր պետութիւնների համար ուժանիւթի միջոցների ընդհանուր շուկայի ստեղծումը կու տայ մի շարք առանցքային առաւելութիւններ: Դա կը նպաստի տնտեսութիւնների կայուն զարգացմանը, բնակչութեան բարեկեցութեան բարձրացմանը, ինչպէս նաեւ ուժանիւթային անվտանգութեան ամրապնդմանը: Դա հաշուի առնելով՝ կարծում ենք, որ մեր երկխօսութիւնը պէտք է ուղղուած լինի փոխզիջումային պայմանաւորութեան թիւերի որոնմանը», նշած է Նիկոլ Փաշինեանը:

Յիշեցնենք՝ ԵԱՏՄ երկիրներու կառավարութիւններու ղեկավարներու մասնակցութեամբ Ալմաթիի մէջ տեղի ունեցած է Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի (ԵՄԽ) նիստը, որուն կը նախագահէ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

### Պաքուն Յիսթորիք Վիճակի Մատնուած

Շարունակուած էջ 1-էն

Ժաշրջաններ, ուր նման մատակարարումը կարող է ապակայունացնել իրավիճակը, այդուհանդերձ 2011-2020 թուականներուն Ռուսաստան եղած է Ատրպէյճանի խոշորագոյն մատակարարը սպառազինութեան գծով: Թէեւ նոյն ժամանակաշրջանին Հայաստան եւս իր զինատեսակներու 90 տոկոսէն աւելին ստացած է Ռուսաստանէն, սակայն գումարային առումով Ատրպէյճան գէնքի վրայ ծախսած է աւելի քան 5 միլիարդ տոլար: Ըստ վերոյիշեալ Հիմնարկին 2011-2020 թուականներուն Ատրպէյճան 8 անգամ աւելի սպառազինութիւն ստացած է, քան Հայաստանը: Իսկ թէ ինչո՞ւ այդպէս եղած է, պատճառը յստակ է. Հայաստանի նախկին իշխանութիւնները թաթախուած ըլլալով կորուպցիայի մէջ չեն կարողացած ապահովել անհրաժեշտ գումարները՝ Ատրպէյճանի հետ քայլ պահելու համար:

գէնքերու մասին բողոքող Պաքուն կը շարունակէ մինչեւ օրս զինատեսակներ ապահովել ոչ միայն Ռուսաստանէն, այլ եւ Իսրայէլէն, Պելառուսէն, Թուրքիայէն եւ այլ երկիրներէ: Այդուհանդերձ, մտահոգուած է, որ նախկին իր ունեցած առաւելութիւնը պիտի չկարողանայ երկար պահել եւ Հայաստան մօտ է առնուազն պաշտպանական գետնի վրայ բարելաւելու իր ռազմական կարողութիւնները:

Պաքուի հիսթորիք այս իրավիճակը հասած է այն աստիճանի, որ իշխանական լրատուամիջոցները կը խօսին Հայաստանի ու Ֆրանսայի կողմէ Ատրպէյճանի դէմ նախապատրաստուող յարձակումի մասին: Այս բոլորը ցոյց կու տան, որ Ալիեւ իրապէս մտահոգ է, որ ապագային պիտի չկարողանայ սանձարձակ վարուիլ ու աւելի երկար պէտք է մտածէ Հայաստանի դէմ որեւէ ռազմական գործողութիւն սկսելէ առաջ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Հայաստանին վաճառուող

# Տեղի Ունեցածը Ոչ Սովորական Իշխանափոխութիւն Էր

Շարունակուած էջ 2-էն

աւելի մօտ չենք եղել մեր վերջնական յաղթանակին, քան այսօր»:

Փաղափարական մակարդակում Վ. Սարգսեան-Ռ.Քոչարեան-Ս. Սարգսեան եռեակի՝ հակամարտութեան կարգաւորումը յետաձգելու եւ ստատուս-քոնցի պահպանութեան դիրքորոշման հիմքում ընկած էր գոյացած ժամանակը պետութեան ուժեղացմանն ուղղելու թէյզը: Զիջումները համարելով անտեղի՝ իշխանութեան այս թելը վստահ էր, որ առաջիկայ մի քանի տարիների ընթացքում Ատրպէյճանը չէր կարողանալու ռազմական գերակշռութիւն ստանալ հայկական կողմի նկատմամբ: Հետեւաբար՝ քանի դեռ իրավիճակը չէր հասել կրիտիկական կէտի, գիշումների կարիք չկար: Տարածքների յանձնումը Ռոբերտ Քոչարեանի համար անընդունելի էր, քանի որ դրանք ամրապնդում էին հայկական կողմի բանակցային դիրքերը. «Առանց ԼՂՀ-ի կարգավիճակի յստակութեան: Մենք անմիջապէս կը գրկուէինք այն առաւելութիւնները, որոնք հիմք էին ծառայում հրադադարի համաձայնագրի համար»: Մինչդեռ Տէր-Պետրոսեանը հակադարձում էր. «Մի՞թէ հասկանալի է, թէ ինչ է նշանակում հարկադրուած գիշում. հարկադրուած գիշումը նշանակում է կապիտուլիացիա: Իսկ կապիտուլիացիայի ժամանակ դու ոչինչ չես գիշում կամ եթէ գիշում էլ ես՝ դրա դիմաց ոչինչ չես ստանում, այլ չլու հնազանդ ընդունում ես այն, ինչ փաթաթում են քո վզին»:

Եթէ Տէր-Պետրոսեանը հակամարտութեան կարգաւորման անհրաժեշտութեան հիմքում դնում էր տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացման արդիւնքում տնտեսական հնարաւորութիւններից օգտուելու անհրաժեշտութիւնը, ապա Ռոբերտ Քոչարեանը պետութեան տնտեսական դժուարութիւնների 90%-ը կապում էր կառավարման վարչարարութեան բարելաւման եւ հարկային քաղաքականութեան հետ: Նա հաւատացնում էր, որ նաւթի գործօնը աշխարհաքաղաքական վտանգներ կարող էր առաջ բերել հենց Ատրպէյճանի համար. վերջինիս կողմնապայտած կառավարման համակարգի պարագայում այնքան էլ միանշանակ չէր, որ ժամանակին աշխատում էր Ատրպէյճանի օգտին: ԼՂ ՊԲ հրամանատար, եռեակին սատարող Սամուէլ Բաբայեանն էլ գտնում էր, որ առանց ԼՂ կարգավիճակի հարցի լուծման, օկուպացուած տարածքների վերադարձի հարցը չէր էլ կարող քննարկուել: Քելբաջարի եւ Լաչինի վերադարձը նա բացառում էր անգամ անկախութեան պարագայում. 1-2 շրջան կորցնելուց յետոյ Ատրպէյճանը հակուած էր լինելու գիշումների գնալ:

Ստատուս-քոնցի պահպանման կողմնակիցները պնդում էին, որ խաղաղ տարիները կարելի էր օգտագործել տնտեսութիւնն ուժեղացնելու համար: Տնտեսութեան, ներքին կարգ ու կանոնի վերականգնմանն ուղղուած քայլերում ստատուս-քոնցի կողմնակիցները դրական տեղաշարժեր էին տեսնում՝ դրանք դիտելով իբրեւ Ատրպէյճանի հետ ուժային հաւասարակշռութեան խախտումը կանխող գործօն: Կարելի է ասել, որ բանա-

վէճի հենց այս փաստարկից էլ մեկնարկեց Հայաստանում բացառապէս ներքին օրակարգի վրայ կեդրոնացման միտումը, երբ հանրային դիսկուրսում ներշնչում էր, որ ներքին ռեսուրսների համախմբման եւ «ճիշտ լուծումներով» զարգացման պարագայում ԼՂ հակամարտութեան փաստական առկայ վիճակը կը պահպանուի, իսկ Ատրպէյճանը չի կարողանալ գնալ ռազմական ճանապարհով հակամարտութեան լուծմանը:

1998թ. Փետրուարին Հայաստանում տեղի ունեցածը ոչ սովորական իշխանափոխութիւն էր, ոչ էլ պարզունակ պալատական յեղաշրջում: Այն քաղաքականութեան վարման մեթոտաբանութեան ռադիկալ փոփոխութիւն էր, որի հիմքում դրուում էր փոքր պետութեան կողմից բազմաշերտ վարմունքի սկզբունքը: Այսինքն՝ հարեւան երկրի հետ ունենալով արտաքին եւ ներքին բազմաթիւ շահուղծներով հակամարտութիւն՝ Հայաստանը սկսեց իւրաքանչիւրի հետ խօսել նրանց չարմար լեզուով եւ ուղերձներով: Այդ վարքը, սակայն չափազանց վտանգաւոր էր, քանի որ մի կողմից՝ հանրութեան մօտ միջապահ ակնկալիքներ էր ձեւաւորում եւ կտրում իրականութիւնից, միւս կողմից՝ միջազգային հանրութեան նախաձեռնութիւններին արտաքուստ համաձայնելով, բայց իրականութեան մէջ պայմանաւորուածութիւնները կատարելու հարցում նախանձախնդիր չլինելով, Հայաստանը անյուրը գործընկերով համբաւ էր կերտում՝ նպաստելով անվտանգութեան միջնորդութիւններից մասնակցութեանը: Հայաստանը, փաստացի, ներքաշում էր բազմաշերտ մի խաղի մէջ, որտեղ գործընթացների կառավարելիութիւնը տարի առ տարի դուրս էր գալու իր վերահսկողութիւնից՝ ստեղծելով խնդիրներ, որոնք ակնբերեաբար դուրս էին հայկական պետութեան սահմանափակ ռեսուրսների միջոցով լուծելու հնարաւորութիւնից: 2021թ. Տէր-Պետրոսեանն ինքն

Այս իմաստալից խօսքերը անխուսափելիօրէն կը պատշաճին մեր ներկայացնելիք տիկիններուն: Իբրեւ երեք եղբայր, երջանիկ եւ հպարտ եմ անոնց բարեկամ եւ գործակից ըլլալուս:

Այս հերոսուհիները անաղմուկ, անշահախնդիր, անսակարկ նուիրումով եւ նիւթական բազմազան գոհողութիւններով ծառայած են ու կը շարունակեն ծառայել առանց խտրականութեան՝ մեր ազգի գաւակներուն եւ մասնաւորաբար, հայրենիքի մեր ազգակիցներուն:

Ընդհանրապէս մենք «հերոս» նկատած ենք անոնք, որոնք իտէպի մը համար նահատակուած են, բայց միջազգային առումով «հերոս» դառնալու պայմանը նահատակուելը չէ, այլ՝ այն անձը, որ կամաւորաբար կը ծառայէ անոնց, որոնք կարիքի մէջ են եւ օգնութեան պէտք ունին՝ առանց գնահատանք ակնկալելու, նոյնիսկ գիտնալով, որ պիտի քննադատուին ու սպառնալիքներու ենթարկուին: Այս ազնուասիրտ տիկինները, թերեւս շատ մը հայկական կազմակերպութիւններէ աւելի, օժանդակած եւ օգտակար եղած են մեր ազգի բարօրութեան եւ մասնաւորաբար՝ մեր ժողովուրդի իրական սեւին:

\*\*\*



## ՍՕՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԵԱԳՈՒՊԵԱՆ

Տիկին Սոնա Եագուպեանի ազգային գործունէութեան մէջ յատկանշական է ընտանեկան ենթահողը՝ բազմավաստակ մտաւորական Օննիկ Սարգիսեանին դուստրը ըլլալը եւ հասակ առնելը այդ մշակութային միջոցառումներուն մէջ: Ինք կը շեշտէ թէ հօրը մահուանէ ետք պարտաւորութիւն գզացած է մասնակցիլ ազգային գործերուն: Բժիշկ ամուսնունց աշխատանքին հետեւիլը, երկու բժիշկ որդիներուն եւ փաստաբան դատէր դատարարականութիւնը, ապա նաեւ թոռնիկները, արգելք չեն հանդիսացած, որ տիկին Սոնա Սարգիսեան Եագուպեան միութենական բազմազան ծառայութիւններու կողքին, 1993 թուականին կը հիմնէր ՀԲԸ Միութեան «Հայ կին» շար-

ժումը (միւստրը) Լոս Անճելըսի մէջ՝ նպատակ ունենալով ծառայել մասնաւորապէս հայ կնոջ ալըզգան կարիքներուն, պաշտպանել անոնց արդար իրաւունքները եւ ներշնչել անոնց ինքնավստահութիւնը:

2002 թուականին Հայաստանի Կիւմրի քաղաքին մէջ անոնք հաստատեցին Յղի կանանց առաջին կեդրոնը: Այսօր՝ 2024 թուականին, 22 տարիներ ետք, արդէն հաստատած են Յղի կանանց 9 կեդրոններ Հայաստանի զանազան շրջաններուն մէջ:

Այս հսկայ իրագործումները յաջողած են տքնաշան աշխատանքներով, դրամահաւաքներով, դասախօսութիւններով, գիտաժողովներով, հեռատեսիլի միջոցաւ մասնաշատուկ ծրագրուած ելուցներով, «Հայ կին» հանդէս-պարբերակներով, որ իր ընդգրկած յօդուածներով, բովանդակութեամբ եւ ձեւաւորումով քայլ կը պահէ միջազգային պարբերակներէ բերու հետ:

Հայաստանի մէջ ՀԲԸ Միութեան «Հայ կին» շարժումը աստուածաշնորհ օրհնութիւն մըն է իր Յղի կանանց կեդրոններով, որոնք ոչ միայն առողջ մանուկներու ծննդեան կը նպաստեն, այլ այս շարժումը դարձած է դաստիարակչական, ընկերային, գիտական, առողջապահական հարցերու ուսուցման համալսարան մը՝ իր անթերի գործունէութիւններով:

Հայրենիքի մէջ «Հայ կին» շարժումը նաեւ կը քաջալերէ կինները ղեկավար դիրքեր ստանձնելու եւ իրենց բաժինը բերելու հայրենիքի բարգաւաճումին:

Կարելի չէ մոռնալ եւ չգնահատել տիկին Սոնայի գործընկերները, այս ազնուաբարոյ, իմաստուն, հմուտ եւ ազգանուէր տիկիններն ու անձնաւորութիւնները, որոնց օժանդակութիւնները այս յաջողութիւններուն մեծագոյն ազդակը կը հանդիսանան:

Գնահատելի նաեւ, որ ՀԲԸՄ «Հայ կին» վարչութիւնը տեսլականով եւ հեռատեսութեամբ հաստատած է իր միութեան՝ «Հայ կին»-ի Երիտասարդական շրջանակը:

Հայաստանեաց առաքելական եկեղեցու Արեւմտեան թեմի առաջնորդարանէն, «Հայ կին»-ի 20ամեակին առիթով, 2013ին, Սոնան կը ստանայ «Ներսէս Ծնորհալի» պատուոյ մետալ եւ կոնդակ, որ կ'աւելնայ իր ունեցած շարք մը այլ պարգևներուն՝ հայ եւ ամերիկեան շրջանակներէ:

Ի միջի այլոց, եթէ փափաքինք գրել «Հայ կին» գործունէութիւններու պատմութիւնը, որ հիմա տիկին Սոնան սկսած է պատրաստել, շարք մը հատորներու անհրաժեշտութիւնը պիտի ըլլայ:

Սոնա Եագուպեան երկար տարիներ նախագահած է տեղույս Հայկական բժշկական միութեան կանանց բաժինը, միեւնոյն ժամանակ մաս կազմած է Ամերիկեան բժշկական միութեան կանանց բաժինին: Քաղաքական հետապնդումներու հետաքրքրութիւններով տարուած՝ տիկին Սոնան անդամակցած է Արեւմտեան Հայաստանի Ազգային կոնգրեսի (NCWA) նախապատրաս-

տական աշխատանքներուն 2006էն սկսեալ, որ պաշտօնապէս հաստատուեցաւ 2011ին, Սեւրի Միթարեան միաբանութեան կեդրոնէն ներս: Ան մինչ օրս կոնգրէսի 3 փոխնախագահներէն մին է: Այս կազմակերպութեան աշխատանքները բաւական ճամփա կտրած են՝ մինչեւ իսկ Տաւութօղլիին հետ ժամադրութիւն ունենալով, պահանջներ ներկայացնելու համար:

Սոնայի հիմնական մտահոգութիւնն է՝ նոր սերունդի հայ կինները դարձնել անկախ եւ անոնց կապել ազգային հարցերուն:

Ազնուափայլ տիկին Սոնա Եագուպեան, «գործը է անմահ», երնեկ քեզի, որ քու գործերովդ պիտի ապրիս անվերջ, անդադար:

\*\*\*



## ԱՆԻ ՍԻՄՈՆԵԱՆ ԹՈԹԱ

Տիկին Անի Սիմոնեան Թոթան Լիբանանի ՀԲԸ Միութեան Դարուհի Յակոբեան վարժարանէն պատուով վկայուած է: ՀԲԸՄ եւ ՀԵԸՆ կերակրողութեան շրջանակին մէջ, փոքր տարիքէն՝ իր ուշիմութեամբ, զեղեցկութեամբ, ընկերասիրութեամբ եւ բազմաթիւ տաղանդներով օժտուած ըլլալը պատճառ էր, որ իր տարեկից ընկերները իրարու հետ կուռէին անոր բարեկամութիւնը ապահովելու համար, իսկ ընկերային հաւաքույթներու ընթացքին կը սպասէին, թէ որուն հետ պիտի պարէր «պալերինա»ն:

Այսօր, 2024 թուականին իր չորս շնորհալի զակակները եւ սիրասուն թոռնիկները իր երջանկութեան աղբիւրներն են:

Այս ուժական (dynamic) տիկնոջ առաքելութիւնը եւ նպատակը եղած է, թէ ինչպէս պիտի կարենայ ամերիկահայերը հաղորդակից դարձնել իրենց մայր հայրենիքին հետ եւ անոնց ծանօթացնել հայրենի ժողովուրդին իրագործումները, համոզել զանոնք, որ նիւթաբարոյապէս օգտակար հանդիսանան հայրենիքի բարգաւաճման:

Փորձեցի ձեզի ներկայացնել այս ազնուաբարոյ Lady-ին իրագործումները, սակայն այնքան բազմաթիւ եւ բազմազան են անոնք, որ տատամսելով, թէ արդեօք պիտի կարենա՞մ արդարօրէն ներկայացնել զանոնք՝ դիմեցի անհամար վաւերաթուղթերու, թղթակցութիւններու ու որոշեցի մէջ բերել Ամերիկայի ծերակուտականներու եւ Տան ներկայացուցիչներու վաւերական վկայութիւնները: Ֆրանք Փալոնիսի՝ Տան ներկայացուցիչ եւ հայապահպան լանձնախումբի ատենապետի վկայութիւնը. «40 տարիներէ ի վեր տիկին Թոթան եղաւ առաջնորդ պաշտպանը մարդու իրաւունքներուն, ջատագովը Հայաստանի, Արցախի եւ ամերիկահայերու համայնքին: Եւ կրնամ առանց վարանուածի ըսել, որ իմ քաղաքական ասպարէզիս ընթացքին Անիին նուիրումը, լանձնաւորութիւնները Հայաստանի եւ

Արցախի հանդէպ անգուզական էին»:

Ծերակուտական էտուրրտ ձ. Մարքի, Սպիտակ տան կարգապահիչ Ստենի Հոէլը կը վկայեն. «Շատ հաճելի է գործել Անիին հետ, մանաւանդ իր անխոնջ ճիգերը ապահովելու համար: Ան իր ամբողջ կեանքը տրամադրեց՝ պայքարելով, որպէսզի ծանօթացնէ հայ ժողովուրդը, անոր Յեղասպանութիւնը: Իր յաջողութեամբ ան արժանացաւ «Մարդասիրական Պատուոյ մրցանակ»ին: Անին միշտ եղած է պայքարող մը, իր իրագործումներու կողքին եղած է նաեւ քաջ եւ բացառիկ կազմակերպիչ մը»:

Անին իր տան մէջ 300 հանրածանոթ անձնաւորութիւններ, յարգարժան քաղաքական ղեկավարներ հրաւիրած եւ հիւրասիրած է՝ պատուելու համար իր բարեկամուհի, կայսրուհի Ֆարահ Տիպա Փահլաւին:

Անին պարգեւատրուած է բազմաթիւ պատուոյ շքանշաններով, շնորհաւորական եւ երախտագիտական նամակներով՝ մեծամասնութեամբ ամերիկեան շրջանակներէն: Իրեն շնորհուած են նաեւ՝ Ամենայն հայոց կաթողիկոսի Կոնդակը, Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» շքանշանը եւ Արցախի Հանրապետութեան «Երախտագիտութեան» շքանշանը:

Անիին տարած 40 տարուայ անխոնջ պայքարին շնորհիւ՝ Հայաստանի անկախութենէն մինչեւ այս թուականը Ամերիկեան պետութեան կողմէ 2 պիլիոն ամերիկեան տոլար յատկացուած է Հայաստանին եւ 50 միլիոն տոլար է աւելի՝ Արցախին:

Նաեւ Անիին 40 տարիներու պայքարը եւ անխոնջ ճիգերը նպաստեցին մեր Յեղասպանութիւնը ճանչցուելուն, եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու համաժողովը եւ իր անձնական բարեկամ նախագահ ձօ Պայտըրը պաշտօնապէս հաստատեցին Յեղասպանութեան իրողութիւնը:

Անիին բարեկամներէն յիշենք մի քանին, որպէսզի կարելի ըլլայ գիտնալ անոր կշիռը եւ ընդունիլ, որ ան գործի անձ է եւ ոչ խօսքի. Ամերիկայի Միացեալ Նահանգներու 5 նախագահները, 100է աւելի ծերակուտականներ, Տան ներկայացուցիչներ եւ անձնաւորութիւններ, Հայաստանի 4 նախագահները, ներկայիս վարչապետը, բազմաթիւ ղեկավարներ, եկեղեցական առաջնորդներ:

Այս հակիրճ եւ ամփոփ տեղեկութիւններով գրութեան վրայ հիմնուելով կրնանք եզրակացնել, որ տիկին Անին Ամերիկայի ամէնէն ազդեցիկ հայ կինն է: Անի Սիմոնեան Թոթան իր ազգանուէր ու հայրենասիրտ գործունէութիւններով հերոսուհի մըն է միջազգային առումով: Եւ այստեղ դարձեալ կը շեշտեմ, որ հերոսանալու պայմանը միայն նահատակուելը չէ:

\*\*\*

## ՌԻԹԱ ՍԻՄՈՆԵԱՆ ՊԱԼԵԱՆ

Շրջանաւարտ է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն՝ պատկաւոր արուեստի հոգեբանութեան եւ մանկանց կրթութեան մասնագիտութեամբ:

Ռիթան իր հանգուցեալ ամուսնունց՝ ճարտարագէտ Վարդգէս Պալեանին հետ ՀԲԸՄ-ՅԵԸՆ կերակրողութեան մշակութային վարչութեան մէջ անգնահատելի գործունէութիւն ունեցած են եւ հիմնադիր անդամներէն են ՀԵԸ-ի «Վահրամ Փափագեան» թատերախումբին: Պէյրութի նորակառուց «Ալէք

# Ջապէլ Եսայեան (1878 - 1943)

## Վիպական Սեռի Ռահվիրաներէն Եւ Բեղուն Գրչի Գեղարուեստագետը



### ՅԱԿՈՐ ՏԻՆԵԱՅԵԱՆ

Ջապէլ Եսայեան, Զօպանեանին եւ ուրիշներու ալ իր ուղարկած նամակներուն մէջ յաճախ անդրադառնալով սահմանադրութեան հոգեւորական ետք օրուան իրավիճակին՝ կը գրէր, որ «ագատութիւնը թեւատ ազատութիւն է, մեզի համար ազատութիւնը շողշողուն բառ մըն է միայն... Ազատութիւնը մենք ինքզինքնունս միայն կրնանք տալ. անիկա իբրեւ շնորհ չ'ընդունուի երբեք...»: Ու, ինչպէս վերեւ նշուեցաւ, «Եւփիմէ»ն լաւագոյնս կը պատկերէ այդ օրուան իրավիճակը, որուն յաջորդած այլ գլուխգործոց մէկ վէպը՝ «Աւերակներուն Մէջ»ը (1911), կը պարագրկէ Կիլիկիոյ հայութեան մահասփիւռ ողբերգութիւնները, Կիլիկիոյ քաղաքներու ծխացող աւերակներու, հրդեհուած գիւղերու եւ ամալացած դաշտերու արինահանդէսները, որոնք կ'ամբողջացունեն վիպագիրին տպաւորութիւններուն վերամբարձ կոտտանքով, գեղարուեստագէտի Աստուածառաք հանձարով ցոլուն պատմում-ակնարկներով: Եսայեան իր «Անէծքը» վիպակին եւ «Սաֆիէ» ու «Նոր Հարսը» գեղարուեստական պատմութեան վերամբարձ քննարկներուն մէջ եւս կ'արտացոլացնէ Կիլիկիոյ աղէտը:

1911-ին կրկին Պոլիս վերադառնալով՝ այստեղ կը մնայ երեք տարի, կը շրջագայի իր ծննդավայրի «որովայն»ին մէջ, կը մասնակցի գրական-հասարակական կեանքին ու երեք տարի ետք՝ 1914-ին դարձեալ կ'անցնի Փարիզ, ուր կը մնայ մէկ ամիս: Յաջորդ տարուան Ապրիլին, Ապրիլ 24-ին ծայր առած հայաջինջ գործողութիւններու ժամանակ, շնորհիւ իր մէկ ճարպիկութեան ու հնարամտութեան՝ Եսայեան հրաշքով կ'ազատի ու կ'անցնի Թիֆլիս, ուր հանդէս կու գայ հրապարակալին դասախօսութիւններով, մամուլի մէջ յօդուածներով՝ նուիրուած խողովորդուող արեւմտահայ ժողովուրդի իրավիճակին եւ արեւմտահայ անջիտուած գրականութեան: Այստեղ, 6 Փետրուար 1916-ին, «Հայկական վերջին Հալածանքները Կ. Պոլսոյ Մէջ» իր դասախօսական նիւթը կը տպուի Թիֆլիսի «Մշակ»ին մէջ: Հրապարակալին ելոյթներով կը շրջագայի քաղաքէ քաղաք՝ Ս. Փեթերսպուրկ, Մոսկուա, Պաքու եւ իրան՝ 1918-ին, ապա Միհրան Տամատեանի եւ քանի մը գաղափարակից գործիչներու հետ կը շրջի միջինարեւելացիներու հակադարձեւումը Ն. Հայաստանին հակադարձեւումը, որ «... ժողովուրդը կը կորսուի, բայց Հայրենիքը կը փրկուի»: Ան յախուռն ելոյթներ կ'ունենայ Սփիւռքի այն զանգուածներուն դէմ, որոնք կը փորձեն սփիւռքահայութիւնը անջատել Մայր Հայաստանէն եւ անտեսել Սովետական Հայաստանի գիտական, կրթական, գրական, մշակութային ու արուեստներու բնագավառներէ ներս ձեռքբերուած նուաճումները:

Եւրեան երկիրներ (Աղեքսանդրիա, Գահիրէ, Պէյրութ, Հալէպ, Ալեքսիա, Մերսին, Հաճըն, Ուրֆա, Ատանա եւ այլուր)՝ կազմակերպելով որբախնամութեան հոգեմարտ, այլեւ նուիրական գործը Սփիւռքի գանազան գաղութներու մէջ:

« « « « «  
1915-ի Մեծ Եղեռնէն թիֆլիս խոյս տուած ու հոն ապաստան գտած Եսայեանի արիւնոտ յուշերը կը տպուի Պաքուի «Գործ» ամսագիրին մէջ եւ ապա «Ժողովուրդի Մը Հոգեվարքը» (1917) եւ «Մուրափի Ճամբորդութիւնը» (1917) խորագրեալ գիրքերու մէջ: Այդ տարիներուն լոյս կը տեսնեն նաեւ իր ուղագրաւ վիպակները՝ «Վերջին Բաժակը» (1916) եւ «Հոգիս Աքորեալը» (1919): Առաջինը՝ ինքնակենսագրական բնույթի ստեղծագործութիւն մը, ուր սիրոյ ներշնչման ուժը եւ անհատի ալեկոծ հոգիի ծփանքը կը բախին իրականութեան այնպիսի պատնէշին: Երկրորդին մէջ, մտաւորականութեան կեանքին ու հոգեբանութեան պատկերը, առաւել անոր ընկալչութեանց եւ գեղագիտական հայեացքներուն համարողութիւնը վիպագիրին պայծառ երեւակայութեամբ կը ներկայացունեն ընկերահասարակական կեանքի համապատկերին մէջ:

Եսայեան արդէն Փարիզ էր՝ երբ խորհրդային կարգերն հաստատուեցան Հայաստանի մէջ: Գրագիտուհին գաղափարական իր արեւելումը դէպի խորհրդային կարգեր բացառապէս էր 1918-ի Մայիսին, երբ ան թեհրանէն հետեւեալը կը գրէր Արշակ Զօպանեանին. «... Բնական է, որ խորհրդայիններու ձայնով պիտի երթայինք: Ինչ որ ալ ըլլայ՝ ոռու են վերջապէս, որոնք հնարաւորութիւնը ընծայեցին մեզ թուրքերու գազաբերի տիրապետութենէն ազատիլ նոյնինքն կովկասի մէջ»:

Խորհրդային Հայաստանի կազմաւորումէն ետք ինկող ժամանակաշրջանին մէջ կ'իջնայ հրատարակութիւնը վիպագիրին «Նահանջող Ուժեր» (1923) քաղաքական վէպին, ուր Եսայեան վիպական ծաւալուն կտաւի վրայ առաջին անգամ ըլլալով նիւթ կը դարձնէ քաղաքական հոսանքներու պայքարը, Ա. Աշխարհամարտի տարիներուն հայկական կուսակցութիւններու գործունէութիւնը ու անոնց միջեւ բախումները, այդ կուսակցութիւններուն դիրքորոշումը Ն. Հայաստանի հանդէպ: Սոյն վէպին մէջ Եսայեան պաշտպանելով խորհրդային

կարգերը եւ բուռն հակադարձելով Ն. Հայաստանին հակադրուողներուն կ'ընդգծէ, որ «... ժողովուրդը կը կորսուի, բայց Հայրենիքը կը փրկուի»: Ան յախուռն ելոյթներ կ'ունենայ Սփիւռքի այն զանգուածներուն դէմ, որոնք կը փորձեն սփիւռքահայութիւնը անջատել Մայր Հայաստանէն եւ անտեսել Սովետական Հայաստանի գիտական, կրթական, գրական, մշակութային ու արուեստներու բնագավառներէ ներս ձեռքբերուած նուաճումները:

20-ական թուականներու իր արժէքաւոր ստեղծագործութեանց շարքին է «Պրոմէթէոս Ազատագրուած» (1928) ծաւալուն գիրքը, որուն երկունքը սկսած էր 1926-ին՝ երբ վիպագիրը առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Սովետական Հայաստան: Գիրքին տեսական-քննադատական շարք մը յօդուածներուն մէջ Եսայեան բացառիկ նուրբ նկատառումներ ու դիտողութիւններ ունի պրոլետարական (բանուորական) գրականութեան առանձնատիպութիւններու նկատմամբ: Ան կ'երթայ այնքան առաջ իր համոզումներուն մէջ, որ Սովետական Միութիւնը կը համարէ «մեր հարազատ հայրենիքը, որ ցոյց կու տայ նոր կարգերու արդարացիութիւնն ու նպատակներու վեհութիւնը»:

1933-ի գարնան երբ վերջնականապէս կը հաստատուի Ն. Հայաստան, բնականաբար Եսայեանի համար կը բացուին կեանքի ու ստեղծագործութեան նոր ուղիներ եւ յոյսի որոնումներ: Յաջորդ տարի մասնակցելէ ետք Սովետական Միութեան գրողներու Ա. համագումարին, նոյն շրջանին լոյսի բարիքին կու գայ իր «Կրակէ Շապիկը» (1934) վիպակը, յաջորդ տարի՝ «Սիւրհոտարի Պարտէզները» (1935) վէպ-լուրագրութեան Ա. հատորը, երբ դեռ չէր սկսած Կենտկոմի Ա. քարտուղար Աղասի Նանջեանի սպանութեամբ (9 Յուլիս 1936-ին) թափ առած Եղիշէ Զարենցի դէմ խաչակրական կատաղի հալածանքները եւ գայն դատաւարութեան ենթարկելու վտանգաւոր տարողութիւնը երկրին մէջ: Ապա, 1936-ի վախճանէն առաջ գրուած (հրատարակուած 1966-ին. քաղաքական ու այլ վիճակներու բերումով հեղինակը դժբախտաբար չ'հասցուց գայն հիմնադրապէս վերամշակելու) վիպագիրին «Պարպակ Նաչիկ» ծաւալուն վէպին կը յաջորդէ լոյս ընծայումը «Երկեր» ծաւալուն ժողովածուին, որուն մէջ գրողը ստեղծած է ներկայ եւ անցեալ կեանքի պատկերներ, որոնք իրենց գեղարուեստական ու գաղափարական աւշայորդումով կապուած են սովետական գրականութեան փորձին:

«Սիւրհոտարի Պարտէզները» ինքնակենսագրական վէպը, օրինակի համար, սոսկ կեանքի մը պատմութիւնը չէ՝ մեծ ու փոքր դէպքերու, պատահարներու յաջորդականութեամբ: Եսայեան այս վէպին մէջ յաջողած է խտացնել ժ. դարու 80-90-ական թուականներու պոլսահայ կեանքը՝ ընկերային, կենցաղային, քաղաքական բազմակի դրսեւորումներով ու հոգեբանական վերապրումներով, որոնք կ'արտացոլան գրողին ծննդավայրը, մանկութեան

չիշատակները: Նորավէպերու շարք մըն է այս երկը, ուր իւրաքանչիւր նորավէպ ունի իր խորագիրն ու հերոսը, մարդոց ցաւի պատմութիւններն ու յոյսերը, երազները, փոխարարները՝ թիւնները՝ ողբերգական հնչեւրաններով գեղուն:

Գրականութեան ֆոնի վրայ՝ Եսայեան-Զարենց փոխհամակրական կապերու մասին յաճախ են գրուած: Այս իրողութիւնը ակնյայտօրէն կը ցոլայ Զարենցի արխիւներուն մէջէն: Զարենց՝ որ 27 Նոյեմբեր 1937-ին գոհ գնաց ստալինեւերիական անասական եղեռնագործութեանց եւ սպանուեցաւ բանտախուցի մէջ, գեղեցմանն անգամ ցարդ անյայտ է: «Ես Իմ Անոյշ Հայաստանի»ի համբաւաւոր երգիչը մեծ համարուեց ունէր Եսայեանի հանդէպ, որ 1936-ին, Հայաստանի Գրողներու Միութեան ժողովին մէջ եւ Զարենցի բանտարկութեան մէկ ամիս առաջ արտասանած էր հետեւեալ խօսքը, որ կու տանք՝ քաղելով Երեւանի մէջ 2007-ին հրատարակուած Զարենցի «Վերջին խօսք» հատորէն (էջ 106), որ կը բովանդակէ բանաստեղծին անտիպ բանաստեղծութիւններն ու այլ փաստագրութիւններ. «Եղիշէ Զարենցը մեր ամենամեծ բանաստեղծն է, այդ անուրանալի է բոլորիս համար: Նրա տաղանդը շողշողուն լոյսի պէս շլացնում է մեզ... Մեզանից շատերի անունները կը կորչեն, բայց գալիք սերունդները չեն մոռնան Զարենցին: Թերեւս մեզանից գալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Զարենցի արժէքով մէկի հանդէպ եղել են արդար կամ անարդար»:

Արդարեւ, այսօր ե՛ւ ապագային, թէ՛ Եղիշէ Զարենցի եւ թէ՛ Ջապէլ Եսայեանի անուններն ու գործերը չաւերժօրէն պիտի շողշողան հայ գրականութեան երկնակամարին: Երկու անհունաստեղծ մեծութիւններ՝ որոնց գեղեցմանները մնալով անյայտ, անոնց վաղաժամ մահով մեր յոյգերուն վրայ աստղնտող անփարատելի կոտտանքը պիտի տեւէ շատ երկար՝ դարերու հնութեամբ:

Զարենցի եղբրական վախճանէն շատ չանցած, բազմաթիւ այլ մտաւորականներու շարքին, Ստալին-Բերիա ուրբագործներու հետապնդմամբ ու բռնադատմամբ ձերբակալուեցաւ, աքսորուեցաւ ու աքսորէ աքսոր հիւժած վիճակով մահացաւ Ջապէլ Եսայեան՝ որպէս խիզախ պաշտպանեալ Զարենցի եւ յանուն արդարութեան, որպէս մեծ երախտաւոր՝ մարդկային միտքի հզօր արարումներու:

Կարգալ Ջապէլ Եսայեան՝ կը նշանակէ գրական ու խոհափիլիսոփայական ակունքներ տանող բազմաթիւ ուղիներ բանալ դէպի համամարդկային անդաստաններ, ուր ամէն օր կը դալարին գեղեցիկ ոճի ու ճաշակներու գրական պարտէզները: Ուր կ'անձրեւեն սիրոյ եւ կանանց ապրումներու անդադրում երգեր, վէպերու վիերաբաց արցունքներ, արցունքին անկործանելի իմաստութիւնը, որոնք կը պարզեն գրական ուրտազնացութիւն մը դէպի յաւերժութիւն...:

«Ալթամար»

### Նոր Գիրքեր Սիրան Սեզա «Նամակներ»

Ստացանք սփիւռքահայ տաղանդաւոր գրագիտուհի Սիրան Սեզայի ամբողջական երկերու Ա. հատորը «Նամակներ»-ն: Շուրջ 720 էջերէջ բաղկացած այս պատկառելի գիրքը լոյս տեսած է Երեւանի «Եգես» հրատարակչատան կողմէ 2023 թուականին: Հրատարակչին է Տէր եւ Տիկ. Վահագն եւ Անի Քիւփեղեանները (որդին եւ հարսը Սիրան Սեզայի):

Նամակների Ա. հատորը կ'ընդգրկէ Սիրան Սեզայի (Զարիֆեան) նամակագրութիւնները Լիբանանահայ ծանօթ գրողներ Վահէ Վահեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի հետ: (1932-1955 եւ 1933-1948): Այս նամակներուն մէջ կ'արտայայտուին անձնական ապրումներ, զգացումներ, յոյսեր, ինչպէս նաեւ կրթական եւ հասարակական նիւթեր:


Գիրքը կազմողը, ծանօթագրողն ու հրատարակութեան պատրաստող Գէորգ Եգեզեանը «Նամակներ»-ի մասին անդրադառնալով կ'ըսէ. - «...Մեծ հաճոյքով կատարեցի այդ աշխատանքը՝ վերապրելով սփիւռքի, մասնաւորաբար լիբանանահայ գաղութի 1930-1970-ական թուականներու անցեալը: Կրնամ ըսել որ աշխատանքի սկիզբէն կ'ապրիմ Սեզայի կեանքով: Անոր ամբողջական ժամանակը հետս է: Կ'ապրիմ իր զգացումներով եւ յուզումներով, կ'ուրախանամ եւ կ'ընդվզիմ իրեն հետ: Մէկ խօսքով, Սեզան դարձաւ կեանքիս վերջին մէկուկէս տարիներուն անբաժան ուղեկիցը»:

Վահագն Սարգսեանի կողմէ խմբագրուած այս հատորին մէջ յատուկ տեղ յատկացուած է յաւելումած բաժինին, ուր կը տեսնուին ծանօթագրութիւններ, ինչպէս նաեւ անձնանուններու եւ տեղանուններու յատուկ ցանկեր:

Հետաքրքրութեամբ կարդացողը շահեկան հատոր մըն է: Սեզայի այլ հրատարակութիւններն են. -

«Պատնէշը», Պէյրուս 1959, Երեւան, 1967:

«Մատթէոս Զարիֆեան», Պէյրուս 1965:



«Մեղաւորուհին» Պէյրուս, 1960, Երեւան 1967 (այս վէպը թարգմանուած է նաեւ արաբերէնի Գ. Մոլոյեանի կողմէ 1970-ին):

«Հեքիաթներու Աշխարհէն» Պէյրուս 1973:

«Գիրք Ծննդոց», Լոս Անճելոս, 2014:

«Խորտակուած Կեանքեր», Լոս Անճելոս 2015:

Լիբանանահայ գրական եւ հասարակական կեանքի բնագաւառէն ներս, իր կարեւոր ներդրումն ունեցած է Սիրան Սեզան (1903-1973) հրատարակելով 1932-էն սկսեալ «Երիտասարդ Հայուհի» պարբերականը: Արդարեւ կանանց ուղղուած եւ կանանց հարցերուն նուիրուած, ինչպէս նաեւ գաղութային եւ ընկերային հարցերու շուրջ իր մեկնաբանութիւններով, «Երիտասարդ Հայուհի» կը նկատուի լիբանանահայ առաջին պարբերականը: Եւ արբանական աշխարհի առաջիններէն մէկը:

Սփիւռքահայ գրական անդատանէն ներս երախտաշատ ներդրում մըն է Սիրան Սեզայի «Նամակներ»-ն: Կը սպասենք հեղինակի Բ. հատորին եւ այլ անտիպ գործերու լոյս ընծայումին:

Վարձքը կատար նախաձեռնողներուն:

Գ.Մ.

### Հոգեհանգիստ, Մոնավառութիւն եւ Ոգեկոչում

Շարունակուած էջ 11-էն

Ինչպէս եւ ցանկացած այլ ազգեկան դիրք ունինք՝ հանդէս գալու մարդկային իրաւունքներու համար, կոչ ընելու համաշխարհային առաջնորդներուն պատասխանատուութեան ենթարկել

Յեղասպանութեան մեղաւորներուն եւ ապահովելու վերականգնողական արդարադատութիւն Հրանդ Տինքի ժառանգութիւնը կը շարունակուի՝ մարտահրաւէր ուղղելով մեզ՝ իրականացնելու անհրաժեշտութիւնը, ուստի մենք կը շարունակենք տօնել Հրանդ Տինքի եւ մեր միւս հայ հերոսներու եւ հերոսուհիներու կեանքը՝ հազարամեակներու ընթացքին, քանի որ մենք կը պաշտպանենք այն՝ որ ճշմարիտ է»:

Ատենապետին միացան Միու-

թեան նախկին ատենապետ՝ Սիմոն Աճըրիաչ, նախկին ատենապետ՝ Տոքթ Արթո Էրսան Խաչերեան, Գործադիր Յանձնախումբի ատենադպիր՝ Սերժ Պուլանքեան իրաւաբան՝ Կարո Ղազարեան, Զաւէն Խանճեան, Կարպիս Սարաֆեան, Նորայր Տատուրեան, ինչպէս նաեւ Տոքթ.

Յովհաննէս Գուրակ Աւետիքեան յանձնելու համար «Հրանդ Տինք Արդարութեան եւ Ազատութեան» տարեկան Շքանշանը, Արաս Հրատարակչատան՝ գոր ստանձնեց Արասի առաջին աշխատակից՝ Նորայր Տատուրեանը: Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ խմբային լուսանկարչական պահ, ապա պատշաճ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկաները իրար հետ ունեցան մտերմիկ զրոյցի պահեր:

### ԱՀԱԼ-ը Սուրբ Ծննդեան Ծրագիրներ Երեխաներու Համար Հայաստանի Տարածքին



Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (ԱՀԱԼ) Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի հետ գործակցաբար իրականացուց Սուրբ Ծննդեան յատուկ ծրագիրներ երեխաներու եւ պատանիներու համար: Դեկտեմբեր 23-էն մինչեւ Յունուարի 15-ը Հայաստանի աւելի քան 30 քաղաքներու եւ գիւղերու մէջ, ներառեալ սահմանամերձ գիւղերը, իրականացուցան շուրջ 60 նման ծրագիրներ, ուր աւելի քան 10,000 երեխաներ եւ պատանիներ լսեցին Փրկչին Ծննդեան Աւետիսը եւ ստացան Սուրբ Ծննդեան նուէրներ:

Վարդենիսի ԱՀԱԼ-ի եւ տեղւոյն Եկեղեցիի թիւր այցելեց 14 գիւղ, որոնցմէ 12-ը սահմանամերձ գիւղեր էին: Սիւսիանի ԱՀԱԼ-ի եւ տեղւոյն Եկեղեցիի թիւր սահմանամերձ 9 գիւղերէն քաղաք տեղափոխեց երեխաներ, ուր անոնք վայելեցին Սուրբ Ծննդեան ներկայացում մը՝ Քրիստոսին բխող ուրախութեան, սիրոյ եւ հոգատարութեան մասին:

Հայաստանի բոլոր մարզերուն մէջ երեխաներն ու պատանիները իւրապատուկ ներկայացումներով փոխանցեցին Սուրբ Ծննդեան Աւետիսը, ուր անոնք յայտարարեցին ըսելով, «Աստուծոյ սէրը սա՛կէս բացառելուց առաջ մեզի հանդէպ: Աստուած աշխարհ զրկեց իր միածին Որդին, որպէս զի ապրինք անոր միջոցով:» (Ա. Յովհաննու 4. 9)

Սուրբ Ծննդեան միջոցառումներու ամենէն ցայտունը ԱՀԱԼ-ի Երեւանի Կեդրոնին մէջ տեղւոյն Եկեղեցիի սրահին մէջ ներկայացուած բեմադրութիւնն էր: Յունուարի 11-12 օրերուն աւելի քան 2,200 երեխաներ եւ պատանիներ լսեցին Սուրբ Ծննդեան Բարի Լուրը երկու օրուայ ընթացքին,

ուր ԱՀԱԼ-ի Հայաստանի թատերախումբը Նունի Աբրահամեանի գլխաւորութեամբ բեմադրեց «Ծնունդն Անտառում» ներկայացումը եւ Սուրբ անգամներ տարբեր խումբերու համար:

Ներկայացումներու աւարտին, երբ կը հնչէր Սուրբ Ծննդեան երգը, դերակատարներէն մէկը մոմ մը վառեց եւ անոր լոյսը փոխանցեց ներկայացման ամբողջ անտառի բնակիչներուն եւ անոնք այլ իրենց կարգին փոխանցեցին հանդիսատես երեխաներուն: Սուրբ սրահը անմիջապէս լուսաւորուեցաւ փոքրիկ լապտերներով՝ խորհրդանշելով, որ մեզմէ իւրաքանչիւրը կը դառնայ Սուրբ Ծննդեան լոյսը կրողը, երբ կը ճանչնանք Յիսուսը եւ կը հետեւինք Անոր պատուիրաններուն:

Սուրբ Ծննդեան բոլոր միջոցառումներուն ներկայ գտնուող երեխաները իրենց հետ տարին Յիսուսի լոյսը խորհրդանշող լապտերները, ինչպէս նաեւ ամանօրեայ ծրարներ, լի հետաքրքիր նուէրներով, միմիանց աւետելով «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզի, մեզի Մեծ Աւետիս»:

«Սուրբ Ծննդեան Ուրախութեան Մասերէն բխող լոյսը լուսաւորեց Հայ մանուկներու միտքն ու հոգիները, որոնք իրենց հերթին պիտի մեծանան՝ լուսաւորելու Հայրենիքը» ըսաւ Զաւէն Խանճեան, Ընկերակցութեան Գործադիր Տնօրէնը: «ԱՀԱԼ-ի նուիրատուները վառեցին այդ կայծը»:

Շնորհակալութիւն բոլոր նուիրատուներուն, որոնք համագործակցեցան մեզի հետ իրենց նուէրներով, եւ Սուրբ Ծննդեան այս ուրախ ծրագիրներու միջոցով ժպիտներ եւ գոլարձալի տօներ պարգեւեցին Հայաստանի եւ Արցախի հազարաւոր կարիքաւոր երեխաներու:

### Թուրքիան Սերժեց Եւրամիութեանը

Շարունակուած էջ 2-էն

ղիւերսիֆիկացման: Սրանք լուրջ վերլուծութեան կարիք ունեցող հարցեր են: Մանաւանդ որ Հայաստանը Հարաւային Կովկասի միակ երկիրն է, որ ԵԱՏՄ-ի անդամ է: Եւ բացառուած չէ, որ ռուս-թուրքական եւ թուրք-իրանական առեւտրատնտեսական, կոմունիկացիոն ծրագրերը շօշափեն նաեւ Հայաստանի շահերը:

Այդ հեռանկարի կանխատեսումները ժամանակատար են, իսկ տարածաշրջանային անվտանգութեան եւ հայ-սուրբայեանական բանակցութիւններին առումով թուրքիայի, պատմական այլ ճանապարհի ընտրութիւնը, կարող է ուղղակի

ազդեցութիւն գործել: Իհարկէ, հաշուեկշիւից միանշանակ չպէտք է դուրս թողնել հաւանականութիւնը, որ թուրքիան Եւրամիութեանը «բարձր դին է առաջարկում»:

Բայց ո՞րն է դա: Թուրքիայի հաւանականութիւնները միայն Կիպրոսի հիւսիսով չեն սահմանափակուած: Եթէ Եւրամիութիւնը մոռանայ Լեւնային Ղարաբաղի էթնիկ գտնումները, թուրքիան «պատմական այլ ճանապարհ» չի՞ ընտրի: Իսկ Եւրամիութեան օրակարգում ի՞նչ նշանակութիւն է տրուում ԼՂ հայ բնակչութեան վերադարձի իրաւունքին: Հայաստանը դիտարկուած է որպէս քաղաքակրթական Եւրոպա:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՅԱԶՊ



ԱՐՄԻԿ ԳՈԾԱՊԱՊԵԱՆ - ՄԱՐԳԱՐԵԱՆ (Փետրուար 15, 1959 - Փետրուար 2, 2024)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ տիկնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝ Արմիկ Մարգարեանի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 2 Փետրուար 2024-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Փետրուար 10 2024, առաւօտեան ժամը 9-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena CA 91107, ապա թաղումը պիտի կատարուի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

- Ամուսինը՝ Աւետիս Մարգարեան
Դուստրը՝ Լարա Մարգարեան
Զաւակը՝ Մարգ Մարգարեան
Քույրը՝ Ծովիկ Գոճապապեան (Լիբանան)
Եղբայրը՝ Վարդան եւ Կարինէ Գոճապապեան
Քրոջ զաւակը՝ Նայիրի Ինքնատիտեան (Սան Ֆրանսիսքօ)
Քրոջ զաւակը՝ Նարինէ Ինքնատիտեան (Լիբանան)
Քրոջ զաւակը՝ Նանար եւ Սամէր Մպայեան (Լիբանան)
Եղբօր զաւակը՝ Ալեքս Գոճապապեան
Եղբօր զաւակը՝ Թալին եւ Ալեքս Կարապետեան
Եւ համայն Մարգարեան, Գոճապապեան, Մակարեան, Նահապետեան, Ուիլիամս, Գապագեան, Աբգարեան, Քայմաքամեան ընտանիքները, հարազատներուն ու բարեկամները:

\*\*\*

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը ինդրուի կատարել՝ AGBU Pasadena Scout-ի 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104:

Ցաւակցական

ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Աւօ Մարգարեանին, եղբօր՝ Տէր եւ Տիկին Վարդան եւ Կարինէ Գոճապապեանին, ինչպէս նաեւ ընտանեկան համայն պարագաներուն:

Ցաւակցական

ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ-ԳՈԾԱՊԱՊԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութեան անդամները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Աւօ Մարգարեանին, եղբօր՝ Հ.Մ.Մ.ի վարչութեան ատենապետ՝ Տէր եւ Տիկին Վարդան եւ Կարինէ Գոճապապեանին, ինչպէս նաեւ ընտանեկան համայն պարագաներուն: Հ.Մ.Մ.ի վարչութիւն

Ցաւակցական

ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ-ԳՈԾԱՊԱՊԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Աւօ Մարգարեանին, եղբօր՝ Հ.Մ.Մ.ի վարչութեան ատենապետ՝ Տէր եւ Տիկին Վարդան եւ Կարինէ Գոճապապեանին, ինչպէս նաեւ ընտանեկան համայն պարագաներուն:

Ցաւակցական

Խորը վշտով համակուած սգում ենք ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ցաւալի մահը: Ի սրտէ Պալաչեան ընտանիքի անդամները ցաւակցում են հանգուցեալի ամուսնոյն Աւետիս (Աւօ) Մարգարեանին եւ զաւակներին, քրոջը՝ Ծովիկին (Պէյրութ), եղբօրը՝ Վարդան Գոճապապեանին, հանգուցեալի բոլոր հարազատներին ու ազգականներին: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$200 տուրք նուիրում են «Մասիս»-ի ֆոնտին:

«Մեր Լուռ Զերոս Զայուհիները»

Շարունակուած էջ 12-էն



Մանուկեան» կեդրոնին Գեղարուեստի վարչութեան իբրեւ ատենապետներ՝ տասնեակ մը նկարչական ցուցահանդէսներ կազմակերպած են՝ ներկայացնելով աշխարհահռչակ հայ գեղանկարիչները, ինչպէս Գառզու, Ժանսեմ, Նորիկեան, Պատիկեան, Եսամին եւ այլն: Գաղթելով Ամերիկա՝ անոնք ՀԲԸ Միութեան տեղւոյն մասնաժողովի գանազան գործունէութիւններու ղեկավար առաջնորդներ եղած են, Վարդգէս Պալեան ընտրուած է ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան անդամ:

Տէր եւ տիկին Պալեանները եղած են համահիմնադիրները ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի ամառնային ճամբարի ուսանողական վարժողական ծրագրերին, 1987ին:

Տիկին Պալեան՝ դաստիարակ, քաղաքական եւ մարդասիրական իրաւունքներու ջատագով, եղած է առեւտուրի եւ դրամահաւաքի մասնագէտ, անխոնջ քաջալերող՝ մշակուցի եւ արուեստներու հաւաքող:

1988ին, Հայաստանի երկրաշարժի շրջանին, Ռիթան՝ Տան ներկայացուցիչ ձիւմ Մարալի հետ գործակցելով յաջողած են կիւմբրին եւ Ալեքսանտրիան (Վիրճինիա) քոյր քաղաքներ հռչակել՝ իրականացնելով փոխադարձ ծրագրեր:

Տիկին Պալեան հիմնադիրը եւ համանախագահն է Հայ-ամերիկեան մշակութային, բարեսիրական եւ մարդասիրական կազմակերպութեան (AACA), որ հիմնուած է 1995 թուականին: Այս կազմակերպութեան միջոցով, տիկին Ռիթան 1997ին, Երեւանի մէջ կը հիմնէ «Հայ ամերիկեան առողջապահական կեդրոնը», ուր ամերիկեան արհեստագիտութեան նորութիւններով եւ Ամերիկա մասնագիտացած բժիշկներով կը ծառայեն հազարաւոր հիւանդներու, հիմնականին մէջ՝ կիներու:

Այս կեդրոնը՝ Wellness Center-ը, որուն շէնքը նուիրուած էր Հայաստանի Հանրապետութեան կողմէ, ենթարկուեցաւ շինարարական ամբողջական վերանորոգութեան: Իր ամուսնոյն՝ Վարդգէս Պալեանին հսկողութեամբ, ճարտարապետական բարեփոխումներով, երկրաշարժին դէմ ապահովութեան միջոցառումներով, այս 6 յարկանի կառուցը այժմ դարձած է գրոսաշրջիկներու աչքելութեան վայր մը իր արդիական գեղեցկութեան շնորհիւ:

Այս առողջապահական կեդրոնին մէջ կը գործեն հետեւեալ բաժինները:

- 1.Կնիտաբանութիւն (Gynecology)
2.Բժշկական տարրալուծարան
3.Ընտանեկան ընդհանուր բժշկութիւն
4.Շողակենսաբանութիւն
5.Ատամնաբուժական դարմանատուն:

Հոս կը պաշտօնավարեն 106 մասնագիտացած անձեր:

Տիկին Ռիթա Պալեանին մարդասիրական, բարեգործական իրագործումները բազմաթիւ են: Պիտի ներկայացնեմ այն բոլոր գնահատանքի խօսքերը եւ ստացած շքանշանները, որոնք կը վկայեն անոր իրագործումներու որակը եւ քանակը: Ամերիկայի երեսփոխանական ժողովի վկայագիրը ներկայացուցեալ ձիւմ Մորինոյի եւ Ֆրանք Փալլոնէի կողմէ, ինչպէս նաեւ Ֆրետեոֆ Նանսէնի շքանշանը, Հայ-ամերիկեան բժշկական ընկերութեան մարդասիրական իրագործումներու մրցանակը: Ստացած է նաեւ ամերիկեան բազմաթիւ կազմակերպութիւններու մրցանակներ եւ Պատուոյ շքանշաններ, նախագահ ձօրձ Պուշի ներկայացուցիչը փոխանցած է «Լուռ հերոս»-ի տիտղոսը, Միացեալ ազգերու կազմակերպութեան կողմէ ստացած է մրցանակ մը՝ «Պատուաւոր քաղաքացի» (Distinguished Citizen) տիտղոսը:

Ամենայն Հայոց վեհափառ Գարեգին Ա.-ն շնորհած է տիկին Ռիթային «Ներսէս Ծնորհալի» պատուոյ շքանշանը եւ կոնդակը:

Պատուակալ տղթորայի կոչումներ ստացած է Հայաստանի Գաւառ նահանգի համալսարանէն, Երեւանի Բժշկական եւ Պետական համալսարաններէն: Այս պատիւները տրուած են իր կրթական, բժշկական, բարեսիրական բացառիկ նպաստներ կատարած ըլլալուն համար՝ Հայաստանի հաստատութիւններուն եւ ժողովուրդին:

Պալեանները հիմնած են «Վարդգէս եւ Ռիթա Պալեան» մամուլի մրցանակը:

Հիմնական գիծերով ասոնք են յարգարժան տիկին Ռիթային իրագործումները՝ ի սէր հայրենիքին, իր համայնքին, իր Միութեան, դարձեալ՝ որպէս հերոսուհի մը անսակարկ նուիրում:

Կ'ուզենք Ռիթային մասին գորութիւնը ամփոփել իր խօսքերով: «Ամէն անգամ երբ մօր մը կեանքը կը փրկենք Հայաստանի մէջ, կը փրկենք ամբողջ ընտանիք մը, եւ այսպէս՝ մեր ազգը»:

\*\*\*\*\*

Ամփոփում-Եզրակացութիւն Վերոյիշեալ տիկինները իրենց ծառայութիւններով եւ բարեգործութիւններով անխուսափելիօրէն միջազգային առումով հերոսուհիներ են, որովհետեւ անոնք անշահախնդիր եւ առանց որեւէ ակնկալութեան օգնած եւ ծառայած են բազմաթիւ անձերու, համայնքներու, պետութիւններու եւ ազգի մը:

Կ'ակնկալենք, որ չմոռցուին անոնց ազգանուէր եւ օգտաշատ ծառայութիւնները:

Յիշելով մեծ բանաստեղծին խօսքերը, պիտի բսնեմք՝ երեսկ ձեզի, հայ ազնուասիրտ տիկիններ, որ ձեր գործերով պիտի ապրիք անվերջ, անդադար:

### «Ռեալ» Անելացուած Ժամանակին Կորսնցուց 3աղթանակը Մատրիտեան Տերափին

Սպանիոյի առաջնութեան 23-րդ հանգրուանին փոխախոյեան «Ռեալ» մատրիտեան տերափին ընթացքին մրցեցաւ «Աթլէթիքոյի» հետ:



Իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած խումբը անելացուած ժամանակին կորսնցուց յաղթանակի առիթը ու բաւարարուեցաւ հաւասար՝ 1:1 արդիւնքով:

20-րդ վայրկեանին հանդիպման արդիւնքով բացաւ Արքայական խումբի սպանացի կիսապաշտպան Պրաիմ Տիսարը:

Անելացուած երրորդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց հիւրերու սպանացի կիսապաշտպան Մարքոս Լիորենտէն:

«Ռեալ» 58 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ժիրոնայէն»: «Աթլէթիքոն» չորրորդն է՝ 48 կէտ:

### «Պարսելոնան» Ուժեղ Էր «Ալաւեսին»

Սպանիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» մրցակիցի դաշտին վրայ հանդիպեցաւ «Ալաւեսին» հետ եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

Սպանացի Չաւրի գլխավորած խումբէն մրցակիցի դարպասը գրաւեցին լեհ յարձակող Ռոպերտ Լեւանտովսկին, Գերմանիոյ հաւաքականի կիսապաշտպան Իլկայ Կիլնտոկան եւ պրագիլացի յարձակող Վիթոր Ռոզէն:

«Պարսելոնան» 50 կէտով երրորդն է, «Ալաւեսը» 12-րդ տեղն է՝ 26 կէտ:

### «Արսենալ» 3աղթեց «Լիվերփուլին»



Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 23-րդ հանգրուանին առաջատար «Լիվերփուլը» Լոնտոնի մէջ հիւրընկալուեցաւ փոխախոյեան «Արսենալի» կողմէ:

3:1 արդիւնքով առաւելութեան հասաւ սպանացի Միկել Արտետայի գլխավորած խումբը:

«Լիվերփուլը» 51 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, «Արսենալը» երկրորդն է՝ 49 կէտ:

### «Մանչեսթեր Եունայթըտ» Խնդիրներ Զունեցաւ, «Չելսին» Պարտուեցաւ

Անգլիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթըտ» ընդունեց Լոնտոնի «Ուեսթ Հեմին» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

Երկու կողմի հեղինակ դարձաւ արժանթինցի կիսապաշտպան Ալեխանտրո Կարնաչոն: Աչքի ինկաւ նաեւ դանիացի յարձակող Ռասմուս Հոյլունը:

«Մանչեսթըր Եունայթըտ» 38 կէտով 6-րդն է, «Ուեսթ Հեմը» 7-րդ տեղն է՝ 36 կէտ:

Լոնտոնի «Չելսին» իր դաշտին վրայ մրցեցաւ «Ուլվերհեմփթընի» հետ եւ պարտութիւն կրեց 2:4 արդիւնքով:

«Ուլվերհեմփթըն» 32 կէտով բարձրացաւ 10-րդ տեղ, «Չելսին» նահանջեց 11-րդ տեղ՝ 31 կէտ:

### «Լեվըրքուսընի» Եւ «Պայրըն Միւնիխի» 3աղթանակները

Գերմանիոյի առաջնութեան 20-րդ հանգրուանին առաջատար «Լեվըրքուսըն» 2:0 արդիւնքով յաղթեց Տարմսդատին: Երկու կողմերուն ալ հեղինակը դարձաւ նիճերիացի կիսապաշտպան Նեյթան Թեյլան:

«Լեվըրքուսըն» 52 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Պայրըն Միւնիխէն», որը 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց Միոնչենկլատայիին:

«Պայրըն Միւնիխ» 50 կէտով կը գրաւէ երկրորդ տեղը:

### «Ինթեր» 3աղթեց «Եուվենթուսին» Եւ Գրաւեց Առաջին Տեղը

Իտալիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին առաջատար «Ինթեր» ընդունեց Թուրինի «Եուվենթուսին»: Միլանեան խումբը յաղթեց նուազագոյն արդիւնքով:



37-րդ վայրկեանին «Ինթերի» ֆրանսացի յարձակող Մարքուս Տիւրամի ճնշման արդիւնքով սեփական բերդը գրաւեց «Եուվենթուսին» իտալացի պաշտպան Ֆետերիքո Կատին:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրի Միլիթարեան խումբի հիմնական կազմին մէջ էր եւ խաղցաւ ամբողջ հանդիպումը: 52-րդ վայրկեանին ան դեղին քարտ ստացաւ:

22 խաղէն յետոյ «Ինթեր» 57 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: «Եուվենթուսը» (23 խաղ) երկրորդն է՝ 53 կէտ:

### Վարազդատ Հարոյեանը Տեղափոխուեցաւ Զինաստան

Հայաստանի հաւաքականի 31-ամեայ պաշտպան Վարազդատ Հարոյեանը իր ասպարէզը կը շարունակէ Զինաստանի մէջ:

Վարազդատ Հարոյեանը պայմանագիր կնքած է չինական Սուփերլիգայի նորեկ «Յինտաօ Ուեսթ Բոսթի» հետ:

Վարազդատ Հարոյեանը անցած ամիս հեռացած էր ղազախական «Աստանայէն», որուն առաջին անգամ 2021 թուականի Փետրուարին միացած էր՝ տեղափոխուելով ռուսական «Թամբովէն»: 2021-ի ամրանը ան տեղափոխուած էր սպանական «Քատիս», 2022-ի ամրանը՝ յունական «Անորթոսիս», ուրկէ «Աստանա» վերադարձած էր 2023-ի Մարտին:



### Միապէն Անվճար Կը Միանայ «Ռեալին»

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի 25-ամեայ յարձակող Կիլիան Միապէն Յուլիան անվճար կը տեղափոխուի Մատրիտի «Ռեալ», կը հաղորդէ ֆրանսական Le Parisien-ը: Միապէն արդէն յայտնած է փարիզեան ակումբի ղեկավարութեանն իր որոշման մասին: Ան չի երկարաձգէր պայմանագիրը, որը նախատեսուած է մինչեւ այս տարուայ Յունիսի 30-ը:



Նախապէս յայտնի դարձած է, որ Միապէն Արքայական ակումբէն պահանջած է հինգ տարուայ պայմանագիր, տարեկան 70 միլիոն եւրօ աշխատավարձով: Ան նաեւ պահանջած է 100 միլիոն եւրօ պոնուս մօր համար, որ իր ֆուլթպոլային գործակալն է:

Ընթացիկ մրցաշրջանին Միապէն ՊՍԺ-ի հետ մասնակցած է 27 հանդիպման, նշանակած է 28 կոլ, կատարել 6 կոլային փոխանցում:

### Լաբորտա. Արդէն 12 Ակումբ Կայ Սուփերլիգայի Մէջ

Սպանիոյ ախոյեան «Պարսելոնայի» նախագահ Ժոան Լաբորտան յայտնած է որ, 12 ակումբներ, արդէն համաձայն են ՈւԵՖԱ-էն անկախ եւրոպական Սուփերլիգայի ստեղծման:



«Եթէ 2024-2025 թուականներու մրցաշրջանին չմեկնարկի Սուփերլիգան, ապա կ'ըլլայ մէկ տարի յետոյ: Ինձի համար միեւնոյն է, եթէ անգլիական ակումբները չմասնակցին: Սուփերլիգան ամէն ակումբին մասնակցութեան համար առաջարկուած է 100 միլիոն եւրօ: Անգլիական ակումբները չեն կարողանար այդքան պարզեւալճար ստանալ, եթէ նոյնիսկ յաղթեն Ախոյեաններու լիգայի մէջ:

Արդէն 12 ակումբ կայ՝ «Պարսելոնա», «Ռեալ», «Ինթեր», «Միլան», «Նափոլի», «Ռոմա», «Մարսի», «Պրիւկէ», «Ատտելլանթա», երեք հոլանտական ակումբներ», - Լաբորտայի խօսքը կը մէջբերէ Mundo Deportivo-ն:

2023թ. Դեկտեմբերին Եւրոպական Միութեան դատարանը վճռած էր, որ ՖԻՖԱ-ն ու ՈւԵՖԱ-ն չեն կրնար ունենալ մենաշնորհ ակումբային ֆուլթպոլի մէջ եւ այլ կազմակերպութիւններ եւս կարող են կազմակերպել եւ կատարել մրցաշարեր: